ԱՐՄԵՆԱԿ

Հ. ՃԻԶՄԷՃԵԱՆԻՆ

ԶԱՆԱԶԱՆ ԳՈՐԾԵՐԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ց. ՓԱՓԱԶԵԱՆ

1858

ԱԽԿԵՐՉ

ԱՄԻ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգասէր եւ Մեծարգոյ Տէ՛ր .

Դիտէ՞ արդեօք իմ ազնիւ Տէրս , թէ ի՛նչ քաղցր մխիթարութիւն մը տիրեց սրտիս , երբ յանձնուեցաւ ինձ այն նպաստը՝ զոր Ձերդ Ազգասիրութիւնը բարեհաճեր էր խրկելու *ՄՈՒՍԵՒՆ ՎԱՍԵԱՑ* Ն . տետրակին հրատարակմանը համար : Դիտցի՛ք , Ազնուասիրտ Տէ՛ր , որ Ձերդ այս մարդասիրական ձեռնտուութեանը համար սրտիս մէջ ծնած երախտագիտութիւնը չեմ կրնար լիուլի բացատրել . բայց վստահ ըլլալով՝ որ Ձերդ խոնարհութիւնը կրնայ իմանալ , թէ ի՛նչ կ'զգայ ինծի պէս դեռաբոյս հեղինակի մը սիրտը այսպիսի բարերարութեան մը համար՝ կը խնդրեմ , Մեծարգոյ Տէ՛ր, որ բարեհաճիք ընդունելու երախտագիտական զգացմանս հաւաստիքը : Քաջ գիտցի՛ք , որ ժամանակը ջիպիտի կրնայ ջնջել մխիթարեալ սրտիս վրայէն Ձերդ բարերարութեան յիշատակը .

որով մնամ միշտ
Ձերդ Ազգասիրութեան
Ամենախոնարհ եւ երախտա-
պարտ ծառայ

ԱՐՄԵՆԱԿ Հ. ՃԻԶՄԷՃԵԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Տ. Տ. ՄԵՍԹԼՈՍ ՍՐԲԱԶՆԵԳՈՑՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՈՑ

Արդարև ուրախութեան գեղեցիկ նշոյլ մը փայլեցաւ Հայկազանց դէմքերուն վրայ այն վարդագոյն Արշալոյսը՝ որ մեր տեսնուեցաւ Հայաստանի հորիզոնին վրայ։ Սկսեց քիչ մը առաջ ամենուս չորսդին տխրութեան թխադոյն ամպ մը պաշարած էր, և անմխիթար կ'ողբայինք Աստուածարեալ Տ. Տ. Ներսէսի մահուանը վրայ՝ Նորին սգատերև նոճիներով շրջապատեալ շիրիմը մեր արտասուքը թանալով։ Ո՜հ, արդեօք այս խղճալի տեսարանը անձայն բողոք մը չէ՞ր առ Հայրենեաց Արարչութիւնն. և միթէ ամենագթածն Երկինք պիտի կրնա՞ր երկար ժամանակ դիմանալ Հայկայ անմխիթար որդւոցը այս ցաւալի վիճակը տեսնելով։ Անշուշտ շարժեցաւ իր գորովագութ սիրտը, և խրկեց առ մեզ իւր խնամոց Գահէն մխիթարութեան Հոգին. և ըրաւ ասիկայ՝ մեր երանաշնորհ հանգուցեալ Հովուապետին տեղ ուրիշ մը յարուցանելով, ա՜ռաջ Ա՜ռանդին պեղ՝ ո՜րչէ պապո՜ական Ա՜ռանդը յանկնէց վերացելոյս։ Փարատեցան մեր վրայէն տրտմութիւնն ու սուգը, և ծագեցաւ անոնց փոխանակ ցնծութիւն և հրճուանք. Քրիստոսեան հօտին արցունքները ալ դադրեցան, զի խրկուեցաւ իրեն ուրիշ Հովիւ մը. որուն վրայ թէ և քիչերը՝ բայց Հայրենասէրք կատարեալ գաղափար ունին։ Անշուշտ՝ ծնաւ այս-

պիսեաց սրտերուն մէջ երախտագիտական աղնիւ զգացում մը առ Յակոբ խնամածու, որ իրենց այսպիսի ՊԱՐԳԵՒ մը խրրեց։ ինչու որ Նորընտիր Արքաղնագոյն Կաթուղիկոսը երկնահաճոյ առաքինութեամբք և բարեմասնութեամբք զարդարուած ըլլալէն 'ի զատ՝ գլխաւորապէս Աղքատաբար Աբրահամ մը կը կրէ իւր դէմքը։ և իր այս գերազնիւ յատկութիւնը օտար Եկեղեցիներուն մէջ անգամ քիչ ճանչցուած չեն։ Յիշեալ Ա. Եհափայլ Հայրապետը հայր էր մասնաւորաց։ իսկ հիմա հայր հասարակաց անուանեցաւ, որով աւելի դիւրութիւն պիտի ունենայ շատ ողբալի տեսարաններ մեր Ազգին մէջէն վերցընելու, արտասուաց զոհ եղող աչուքները սրբելու, և զանմխիթարները մխիթարելու։ Կը յուսանք, որ Հայկայ բոլոր զաւկները նոր ասպարէզի մը մէջ պիտի մտցընէ, և մեր յոյսը անհիմն չէ։ ինչու որ Ինքը կոչուելու — ճշմարիտ Աղքատաբար մը է։ Ընչուշտ պիտի ջանայ Ս. Եծին Ներսէսի շաւղին հետեւելու և Հայաստանի բարերարը կոչուելու . . . Օրհնեա՛լ զգացումն, երջանի՛կ պատեհութիւն . . . ։

Արդ՝ ո՛ համազգի Եղբայրներ, եկէք, այս տարին նոր դարագլուխ մը սեպենք և միաբերան ուխտ մը կատարենք. ուխտենք յանուն Երկնից և Հայրենեաց, որ բոլոր Ազգակիցներս սիրենք, և բնաւ չատենք անոնցմէ և ոչ մէկը. թող լսէ՛ բոլոր աշխարհ այս մեր սրբազան ուխտը։ Ասկէց աւելի ի՞նչ կրնանք ընել, ո՛ Ազգակիցք, որով կարենանք Երկնից հաճոյ և միանգամայն մեր գերընտիր Հօտապետին մխիթարութիւն ըլլալ. հետեւաբար մեր Ազգին բարեկարգուելուն ցանկալի պատճառ մը։ Ահա՛ որ միաբանութիւն կը ծնանի, սէրը և միաբանութիւնն են՝ որ աշխատութեան մէջ քաջալերութիւն կ'ընծայեն մեզ. վերջապէս այս երեքովն է՝ որով մենք ալ կա-

բենանք բարեկարգեալ Ազգ մը ըլլալ։ Եթէ ընդհակառակը՝ մէջերնիս սէր, միաբանութիւն ու ջանք չունենանք, 'ի դերև կ'ելլան թէ Հովուապետի մը և թէ Առաջնորդի մը ըրած բոլոր ջանքերը։ Ահեծն Ներսէս հաստատութիւն մըն է այս մեր ըսածին. Ինքը առաքինի, հայրենասէր, և աշխատասէր Հովիւ մըն էր Հայաստանեայց Եկեղեցւոյ. բայց և այնպէս իր այս յատկութիւնները կարող չեղան խլելու Բ. Արշակայ սրտէն ատելութեան, հայրենատեցութեան և փառամոլութեան արմատը. հետևաբար՝ Հայաստան զոհուեցաւ Արշակայ, և անթիւ Հայազգիք թշուառութեան մէջ ընկղմեցան իրենց արեամբը Հայաստանի աւերակ դարձած քաղաքները ներկելով։ Ներսէս միութիւն կը քարոզէր, բայց ի՞նչ օգուտ, որովհետև նախարարք ալ իրենց թագաւորին օրինակին հետևելով անմիաբանութեան դրօշակը կանգնելու կ'աշխատէին։ "Պիրեցէ՛ք մեկզմէկ" կը գոչէր Ներսէս. կը պաղատէր, կ'աղաչէր, Երկրին ապագայ թշուառութիւնը անոնց աչացը առջև կը դնէր, և իւր աստիճանէն շատ վար կը խոնարհէր՝ զանոնք համոզելու, որ սիրով կապուին իրարու հետ . . . աղէ՛, 'ի զուր էին իր թախանձանքը, յորդորները, և աղաչանքը։ Անօրէն և անսիրտ Արշակ Բ. նախատելի օրինակ մը եղած էր վատահոգի նախարարաց. որոնք իրարու դէմ թշնամացած՝ սուր կը քաշէին իրարու խրոցներին բթացած և Հայրենիքը ոտքի տակ ճմլելով։ "Հաշտութիւն վասն Հայրենեաց" կ'աղաղակէր Ներսէս. արտասուալից աչուքները աղիողորմ ջրոս դին դարձընելով. բայց ո՞վ կը լսէր իւր ձայնը. ամենուն ականջները խլացած էին իրենց Խարերարին խօսքերուն դէմ, և իրենց անձնական զուարճութեանցը մէջ կը թաւալէին . . . բայց ո՜հ, վերջապէս հաստատ սոսկալի փոթորիկը, և աղէտները սկսան ծանրանալ մեր Երկ-

ին վրայ. զարհուրեցաւ Արշակ, զարհուրեցան նախարարքն ևս, բայց ուշ. ա՛լ Երկնից բարկութեան բաժակը լցուած էր . . . Ներսէս անմխիթար կ'ողբար իւր Հայրենիքը, բայց իւր հառաչանաց սրտակեղ ձայնը և ո՛չ մէկուն ականջին թմբուկներուն կը զարնէր։ ԱՏԵԼՈՒԹԻՒՆԸ, ԱՆՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ, ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ և ՓԱՌԱՄՈԼՈՒԹԻՒՆԸ անգութ բռնաւորներու նման. իրենց ճիրաններուն տակ գերած էին զԱրշակ և իւր նախարարները, գրեթէ Ներսէս միայն ազատ մնացած էր այս բռնաւորաց դերութենէն։

Ահա՛, սիրելի Համազգիք. ահա՛ ամենազօրաւոր փաստ մը մեր առջև։ Հայրենասէր, Աստուածապաշտ, և ջանասէր Հօտապետի մը բոլոր ճիգերը անպտուղ կ'երլլեն, երբ ղեբար էրբենէ, և Միքբանոռնեան գեղեցիկ Ոգին ղեբցալ է ի ծեղ։ Ապա ուրեմն՝ դարձեալ կ'ըսենք, եկէք, և ղեբար փրելը— ո՛չ մը ընենք այս ցնցոտիին առուրս մեջ. Միքբանոռնեան ձիրանափայլ դրօշակը յեռուընս առաջ՝ քաջապէրդ և ճշմարիտ Հայերու նման՝ անյերնս պարարտարեն Աղգերնուս յարաջդիմռնեանը համար աշխատելու. որով արժանի ըլլանք ճշմարիտ Հայ և ճշմարիտ Քրիստոնեայ կոչուելու, և մխիթարութիւն ու քաջալերութիւն մը ըլլանք մեր ՎԵՀԱՓԱՑԼ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ. որն որ այս ամենը տեսնելով՝ աւելի եռանդով պիտի աշխատի իւր Քրիստոսաւանդ հօտին բարեկեցութեանը համար։

ՈՒՂԵՐՁ

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ԱՌ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

ԵՒ ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐԱՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Յօղ օրհնութեան ցօղեն Երկինք 'ի ստորև,
Եւ սիրոյանաց գեղատեսիլ հեշտ Արև
Զ'Արարատեան դաշտաց տրխուրն ըմբռայլ
Արդ փոխարկէ 'ի լոյս զուարթ գեղափայլ։

Փառք Արարչին՝ Ոյր ձեռն հրաշք գերագոյն
Կորզեալ 'ի բաց զքօղ տխրանաց և սրդոյն՝
Դառն յարտասուաց սրբէ զաչկունս մեր համայն,
Պաղցր 'ի ժրպիտ երեսաց հրճուին և խայտան։

Զ'ի զարդեսէր քաղցրագորով սուրբդ ըզ-այր
Մեզ հայրազուրկ որդւոցս ետ Տէր 'ի մխիթար.
Յուցար այս՝ 'Վ երին Խնամոց Վ ԵՀ ՊԱՐԳԵԻ
Զ'ուրախութեան ըղդրաւական բերեալ ՔԵԻ։

Ո՜Հ մինչ Տաճարն 'ի տխուր ձայնից յարձագանգ
Զ-անգուցելոյն պատուէր ըղդառն յիշատակ,
Եւ մինչ մանկտին առագաստի 'ի թախիծ
Ըզ-Երուսաղեմն ըզ-այրն ողբայր սուրբ զանբիծ,

Ահա տրխուր ձայնք լռեցին ետ ընդ ետ
Մինչ 'ի սեղանս հնչեաց անուանդ Հայրապետ,
Ընդէն լեզուք առ խնդութեան զերթ թոթով
Այր առ ընկեր զայդ աւետիս տայր փութով։

Եւ դարագլուխ օրն մեզ եղև բարեբաստ
Յոր կատարիւր տօն ցնծութեան անդ և աստ.
Երդմնէր այր այր շնքեղ զաւուրդ տարեդարձ
'Ի քաղցր հրճուանս պատուել 'ի սիրտ սիրարծարծ։

Ընդ Վեհափառ Հայրապետիդ ընդ առաջ
Եւ շուրջ ըղձեալ մանկունքն Հայկեան ձախ և յաջ
'Ի կայթ 'ի պար առեալ օրհնելդս 'ի բերան
Քեզ մաղթեսցեն անդորր աւուրց բիւր շրջան։

Եւ արձագանդ խուռն ամբոխիդ սիրախանդ
Յունկն Ընմահին գոռ հնչեսցեն 'ի վեր անդ.
Ամն Ընեղին Քեզ հովանի պահապան
Եւ օրհնելով միշտ օրհնեսցեն ըղձալ կեան։

Հապա՛ արի՛, ո՜ Հայրապետ Արքազան
Փութա՛ սիրով, Քեզ գահն մնայ Տէրունական.
Կեցցե՛ս յաւէրժ 'ի պերճ գահուդ վեհափառ,
Կեցցե՛ս յաւէրժ 'ի սէր Տոհմիդ նոյն 'ի փառս։

Յաշակերտաց սասունաբնակ
Մայր—Նիկոլեցոյ

ԵՂԻԱԶԱՐ Մ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Ց. ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

Ո՞վ արդեօք կրնայ երկբայիլ, թէ Հայոց ազգին ներկայ վիճակին մէջ չի գտնուին իր ծոցը այնպիսի ազնիւ հոգիներ՝ որոնք նախանձելի և վեհ յանդգնութեամբ մը բոլորովին ազգային պայծառութեանը նուիրած են զիրենք՝ փառամոլութիւնը և անձնասիրութիւնը ոտքի տակ առնելով, և ամենևին բանի տեղ չի դնելով այն բոլոր նեղութիւնները՝ որ պատրաստ են պաշարելու ազգասիրական զգացմանց արդիւնքը յայտնելու փափաքող անձինքները։ Ազգասէրները և ոչ իսկ անդրնդոց իշխանէն կը սոսկան, որն որ այսպիսի անձանց անհաշտ թշնամի հանդիսացած՝ կարծես թէ բոլոր աշխարհ իրեն իշխանութեանը գործիք մը ըրած է, և կը թշնամացընէ զայն անոնց դէմ։ Իսկ ճշմարիտ ազգասէրը բոլոր այս իրեն դէմ պատրաստուած թակարդները, պատնէշները և թումբերը միայն ոչինչի տեղ դնելով՝ աչուրները ազգասիրաց մեծ Բարեկամին և Պաշտպանին ուղղած, և սիրտը ձեռքին վրայ՝ աներկիւղ կը կանգնի, և իւր թշնամւոյն վրայ այնպիսի հայեցուած մը կը դարձընէ՝ որպէս թէ ըսել կ'ուզէ. "Ո՞վ ես դու, ո՜ յիմար թշնամիդ ազգասիրաց, և ի՞նչ է քու զօրութիւնդ. ո՞վ "են քու գործակիցներդ. ի՞նչպէս կը յուսաս զիս յաղթելու, "քանի որ Ամենակարողին պաշտպանութեանը եմ յուսացած։ "Այո՛, գիտեմ քու ընելիքներդ. գիտեմ նաև, որ ի՞նչ բաներ "կրնաս զրկել զիս. բայց գիտցիր դու ևս, ո՜ իշխան և "տէրդ ազգատեաց անձինքներու, որ ես թէ զքեզ և թէ "քու բոլոր բարիքներդ կ'անարգեմ, և աւելի նախապատիւ "կը համարիմ Աստուծոյս սիրելի ըլլալ քան թէ զանոնք վա"յելել. միայն Աստուած է իմ յոյսս և ապաւէնս, որ իմ "պարիսպս ըլլալով՝ կ'ուզէ որ իրեն կամացը համեմատ շարժիմ, "և սիրելի Ազգիս համար աշխատիմ։ Գիտի զրկես դու զիս "իմ ծնողքէս. բայց գիտցիր ևս, որ ես երկինքը բնակող դո"րովագութ Հայրս ունիմ. իմ բարեկամներս զիս պիտի ա"տեն. բայց ես այնպիսի Բարեկամ մը ունիմ՝ Որուն բարե-

«կամութիւնը անկեղծ է։ Գիտեմ, զիս աղքատութեան պի-
«տի մատնես. բայց գիտցիր դու ևս, որ բոլորովին ոչինչ կը
«համարիմ ոսկին, արծաթն ու գոհարները. որոնք մեկ մեկ
«չաստուածներ են աղքատացներուն համար. գիտցիր ևս, որ
«երկինքը իմ Հօրս քով այնպիսի հարստութիւն մը ունիմ՝
«որ քու պարգևածներուդ նման գողցուելու և փտելու են-
«թակայ չէ. այլ այնպիսի հարստութիւն մըն է՝ զոր իմ պար-
«տաւորութիւնս և պաշտօնս հոս կատարելէս վերջը՝ յաւիտ-
«եան պիտի վայելեմ, և անով երբէք թշուառութեան
«համը չի պիտի առնեմ։ Արդ՝ ո՜ նախատելիդ Աստուծոյ,
«ինչ աւելի չարիք կրնաս հասցընել. ահա ճակատաբաց կը
«կանգնիմ քու առջևդ։ Գիտցիր, որ ես անդրդուելի եմ
«որոշմանս վրայ, և ոչինչ կրնայ իմ ըրած որոշումս ետ կե-
«ցընել զիս. յարձակէ քու բոլոր վայրենի կատաղութեամբդ։
«Իմ վահանս արիութիւնն է. և այժմ երկնից Տէրն է, և
«իմ զէնքս Աղգասիրութիւնն է։ Արդ՝ ո՜ քսուդ, խօսէ,
«տեսնեմ թէ դու ինչ ուժով, ինչ վահանով և ինչ
«զէնքով պիտի յարձակիս իմ վրաս.... պապանձեցա՞ր....
«այո՛. ապա ուրեմն դնա՛, և խայտառակութիւնդ քու անյա-
«տակ անդունդներուդ մէջը ծածկէ, և մի՛ ալ ես յանդգնիր
«աղգասիրաց դէմ զինելու....»

Ահա այսպիսի կերպով կը խօսի ճշմարիտ Աղգասէրը իր թշնամւոյն դէմ. ինչու որ իր զօրութիւնը Ամենակարողն է, և ոչ արդեօք կը համարձակի այսպիսի մէկու մը դէմ զինելու։

Արդ՝ ո՜ սիրելի Աղգայինք, փնտռենք անգամ մը, թէ մեր Աղգին մէջ ալ այսպիսի Աղգասէր մը կը գտնուի՞ ներկայ դարուս մէջ. վասն զի այնպիսւոյն օգուտը շատ է մեր Աղգին համար.... բայց ասանկ անձ մը գտնելու համար շատ աշխատութեան չենք կարօտիր. վասն զի այս դարուս մէջերը երևան ելան այնպիսի մեկ քանիներ. որոնցմէ ոմանք ալ արդէն ճանչցուած են. և ահա ասոնցմէ մեկը Հիմա Հայաստանի մէջ կը գտնուի, իւր քաղցր Հայրենեաց գրկին մէջ։ Այո՛, երջանիկ Վանը իւր մէջը ունի այնպիսի անգին դանձ մը՝ որ վերոյիշեալ Աղգասիրին նման իւր թշնամիները արդէն ամաթով հանած՝ յաղթութեան դրօշակը կանգնելու կը պատրաստուի՝ ապացոյց մը ըլլալու համար, թէ ճշմարիտ ազգասէրը անպատճառ պիտի յաղթեն ամենայն դժուարութեանց և կանգնին պիտի իրենց յաղթանակը։ Ահա Շ. ամիրամեան

Վ՝անը բաղդաւոր եղած է վայելելու Խրիմեան Հայրենասէս Տ՝ Մկրտիչ Վ՝արդապետը. որուն անվեհեր սիրտը և աղգասիրական զգացումը դեռ նոր ճանչցուած չեն մեր Ազգէն. որ նորին աշխատութեանց պտուղը սկսած է արդէն վայելելու. բայց շատ ցաւալի է յիշելը, որ ինքը տակաւին օգնութեան կը կարօտի։ Եւ ո՜հ, առաւել ցաւալի է յիշելը, որ խիստ քիչեր կան՝ որ իւր յարգը ճանչնալով զինքը խրախուսելու աշխատին. և ասիկայ ակներև կը տեսնուի. ինչու որ ահա՛ իւր սրտին ազնիւ զգացումները պարունակող ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾԻՒԸ դեռ հազիւ ճանչցուած է քիչ մը անհատներէ։ Ո՜հ, եթէ Ազգայինք գիտնային անգամ մը այն սիրտը՝ որ իւր ԱՐԾԻՈՑՆ թեւերուն միջոցաւը սիրելի Ազգակիցներուն խրկելու կ՝աշխատի իւր կենսատու խօսքերը, այն ժամանակը շատ տարբեր ընդունելութիւն մը պիտի ցուցունէին անոր։ Արդ՝ ո՜ Ազգայինք, արթննանք անգամ մը, և բանանք մեր ընդունելութեան դռները ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾԻՈՑՆ և մեր գրկերուն մէջ հանգստեան տեղ մը տանք իրեն. որպէս զի իւր բերած ցնծառիթ լուրերովը ուրախանանք։ ԱՐԾԻՒՆ է որ կը խօսի, ո՜ Արենակիցք. այն ԱՐԾԻՒԸ՝ որ Վ՝անէն ելլելով բոլոր Հայաստանի վրայէն կ՝անցնի ու մեզ կը հասնի. այն՝ մեր Հայրենիքէն մեզ լուր կը բերէ, մեր քաղցր Հայրենիքէն. և ո՜հ, որչափ մխիթարութիւն կը պատճառէն անոնք։

Դառնանք արդ Ձեզ, ո՜ ճշմարիտ Ազգասէրդ Խրիմեան, և յայտնենք, թէ ինչ կ՝զգանք մեք Ձեր վիճակին վրայ. և եթէ ներումն կը շնորհէք, խմացընենք Ձեզ, որ Ձեր սրտին ազգասիրական եռանդը, ընական Երկիրնիդ, և ձեռքերնուդ աշխատութիւնները շատ նախանձելի են, և իրաւամբ կրնաք կոչել Դուք զՁեզ երանելի։ Այո՛, երանի՜ Ձեզ, որ Ազգասէր մըն էք. երանի՜ Ձեզ, որ աշխատասէր մըն էք. երանի՜ Ձեզ, որ ձեր Հայրենեաց գիրկն էք. և բիւր երանի՜ Ձեզ, որ յերկնից խորանը կանչուած ժամանակնիդ՝ դէթ Ձեր ոսկերոտին Դալանեաց ոսկրները ամփոփող և Անոնց արեամբը շաղախեալ հողին մէջ պիտի հանդչին։ Ձեր նախանձելի բաղդը և կացութիւնը ամեն տեղ յայտնի կը քարոզեն զՁեզ, և Ձեր կանգնելու յաղթանակին աւետիսը կուտան մեզ. արիացէք ուրեմն, կրկին եռանդով բորբոքեցէ՛ք, հոգինիդ, սրտերնիդ և ուղեղնիդ միայն Հայրենեաց համար գործածեցէ՛ք... բայց

ինչ արդեօք կը պակսի Ձեզ, ո՞ բարեկամդ մեր... դրամական օգնութիւն... Ա.յո՛, կը պակսի Ձեզ, գիտեմք, այն մէկ հատիկ միջոցը՝ որով կրնան ամեն ազգասէրք հասնիլ իրենց նպատակին աւելի շուտ։ Բայց ինչ, միթէ ասոր համար պիտի վհատիք. պիտի յուսահատիք. քա՜ւ լեցի. ինչու որ Ամենաարձրեալը՝ որ զՁեզ այդպիսի սրբազան պաշտօնի մը կանչեց, անշուշտ պիտի պատրաստէ այն ամեն նիւթական օգնութիւնները՝ որոց կը կարօտիք. արթընցուներ պիտի անշուշտ այնպիսի Ազգակիցները՝ որոնք իրենց համար հարկ եղածէն աւելի ունին. և այնպիսիները պիտի տեսնեն անպատճառ, թէ իրենց անհրաժեշտ պարտաւորութիւնն է օգնել Ազգաւոր պաշտօնեայ։ Կը յուսամք, որ պիտի դայ այն օրը՝ որ Ձեր նպատակին պիտի հասնիք, այն նեղութիւնները Երկնից շնորհիւը փարատելով։ Ուրեմն քաջալերուեցէք, Տ՛այր, և աչուընիդ շարունակ ուղղեցէք Ամենօրհնեալին. Որմէ միայն կը բղխին ամեն երկրաւոր ու երկնային բարիքները։ Երշաւեցէք յառաջ Ձեր պաշտօնին մէջ յօգուտ ընդհանուր Հայաստանի և 'ի հաճութիւն Երկնից. հաստատ հաւատալով՝ թէ Ձեր վարձքը շատ է Երկինքը. և ներեցէք մեզ առ այժմ լռելու, վստահ ըլլալով՝ որ ուրիշ պատեհութեամբ դարձեալ Ձերդ բարեյաջողութեան համար աշխատիլը մեզի մեծ պատիւ պիտի համարինք. միայն թէ ոսկի և արծաթ չունինք, բայց ինչ որ ունինք չենք խնայեր. և այն ալ սա է որ՝ շարունակ աղօթող պիտի ըլլանք առ Բարձրեալն վասն յաջողութեան Ձեր. և երբ որ հարկ ըլլայ, մեր տկար գրիչը. յուսալով որ, համայն Ազգակիցք զՁեզ եղածնուդ պէս ճանչնան։

ՆՈՒԷՐ

ԱՌ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒԻՆ

ԵՒ ԱՌ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ՀԵՂԻՆԱԿՆ ՆՈՐԻՆ

Ե՛կ, ո՜ ԱՐԾՈՒԻԴ, Վ ասպուրական գաւառէն,
Ե՛կ, մոթիր ներս մեր անարժան դռներէն.
Տուր մեզ, ԱՐԾՈՒԻԴ, շատ աւետիս բերկրալի
Հայաստանէն մեր Երկիրէն Հայրենի։

Հանգիր, ԱՐԾՈՒԻԴ, մեր պաղարիւն կուրծքին մէջ.
Ուր է՛ս կենար, մեք լաւ գիտենք, մինչ ցրվերջ. . .
Երդ՝ ըսէ՛ մեզ, Հայաստանը ուրա՞ն է,
Իրեն ցրուած որդիքը դեռ կը յիշէ՞։

Խօսէ՛, ԱՐԾՈՒԻԴ, որ սրտերնիս սիրուին,
Եւ մեր աչաց դառն աղբիւրներն դադարին.
Ըսէ՛ մեզի, Հայաստանը կ'սպասէ՞,
Իւր որդւոցը, որոնցմէ բաժնուած է։

Ո՜հ, տուր մեզի, ո՜ դու ԱՐԾՈՒԻԴ ՎԱՍՊՈՒՐԵԱՆ,
Դաղցը լուրեր Աղգասիրէն Խրիմեան.
Որ սրբազան պաշտօնի մը կոչեցաւ,
Եւ զերթ չբքնաղ աստղ շքեղ փայլեցաւ։

Երդ՝ երթ բարեաւ, ո՜ ԱՐԾՈՒԻԴ վեհ, երթ բարեաւ.
Երկինք ըլլայ քեզ միշտ պաշտպան, և անբաւ
Օրհնութեամբը քեզ լեցընէ, որ ապրիս,
Հայկայ Թոռանց ամեն մէկուն լուր տանիս.

Ըսես անոնց, թէ՝ հասած է ալ ժամը,
Որ արթննան, փնտռեն իրենց օգուտը,
Աղգայնութեան սիրոյ ջահը արծարծի
Սրտերնուն մէջ. և ալ բընաւ չմարի։

ՆՈՒԷՐ

ՑԱՒԵՐԹԱԿԱՆ ՍԻՐՈՑ

ԵՒ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԱՌ Պ. ԵԳՈՒՍԷՊ ՏԻՒԼՈՒԲԻԷ

ԱԶՆՈՒԱՀՈԳԻ ՀԱՅԱՍԷՐՆ

'Ի ԳԻՄԱՑ ԵՐԱԽՏԱԳԱՐՏ ՀԱՅԱՍԵՒԻՑ

Դէ՛պք նորահրաշ, Մարմարեմեջ Նոր Արփի
'Ի Մարմարիս ծագեալ շնչեղ, և զնաւար
Կապտեալ սիրով ըզմեր փառաց աշխարհի
Լոյծ ըզմեզ 'ի բերկրութեանն ոսկեղար։

Հապա սերունդք Ա. Եղիշէ Հայկայ խմբովին
Օնախնին խնդից բերցո՛ւք 'ի դէմս ընկալ,
Եւ յիշատակ պերճ պարծանաց վաղեմին
Քաղցր հնչեսցէ՝ Հայ լսելեաց հեշտարար։

Ո՛հ տխրանացս ուրեք տակաւ երաշխէպ
Յուսի տակաւ, մեզ հրճուանաց ժամ է պրդ.
Օվ հայրենի ծածկեալ շնչեղն քաղցր ըզվէպ
Ա՛ռէ յօժար Տիւլբիէ վեհ Ադուարդ։

Դու որ ըզսիրաս Հայ որերոյն բուվանդակ
Դրաւեցեր շնորհապարտ քեզ ոգւով.
Բանի՞ ապա լեզուք նոցին համարձակ
Պերճ ձեռնարկիդ հանդիսասցին ջատագով։

Ո՞ր այն շը.քեզ քան զայս հանդէս, զի սիրով
Ընոյ Աղենս ըզքօղարկեալ փառս աղօտ
Ի լոյս հանեալ ընծայեսցես խնամով
Ի տեսարան թերևս բազմաց անծանօթ։

Ցնծայ այժմուս հոգւովն այն վեհ Վաղարշակ՝
Որ Հայկազանց ըզպետութիւն նորոգեաց.
Օվ իւրն արդար բուսոյ բարուց յիշատակ
Դարուց ըզկնի ի փառս Տոհմին Բև հնչեաց։

Եւ Արտաշէս գլուխ վեհազուն քաջարանց
Ի վէպս ազգաց քան զԱղէքսանդր ներբողեալ՝
Այժմ քան ի Յոյն և ի Հռոմ պատմագրաց
Ի քէն յաւէտ գտցէ զիւր անձն համբաւեալ։

Ոչինչ նուազ Տիգրան Երկրորդ պերճանուն՝
Որ թագակիր ի գերեալոց պաշտեցաւ,
Օտարքայական գանձ ոսկերացն և զաճիւն
Բեզ շնորհապարտ դաւանեսցէ, որ չէ բաւ։

Այլ զի զհանճար քոյդ խուզարկու և զտաղանդ
Ընութեանց փառացս ի յիշատակ նուիրես,
Եւ ըզկենացդ անթիւ վայրկեանս մինչ յաւարտ
Ո՛չս աւերաց մեր ի զննին պարապես,

Ահա իսկոյն մեր արձագանգ հրճուանաց
Թռուցեալ աստուստ 'ի Վ. Հալնոյդ լսելիս,
Դարձցին ապա և 'ի շիրիմն մեր նախնեաց
Կրկնել և անդ շնչել թնդիւն ըղձայնիս։

Թերևս հիւծեալ շրթանցն առեալ շունչ ոգի
Դաշտն զտխուր խոր բերկրութեամբ և զդամբանս
Ընչեցուսցեն, մինչ մեք 'ի սիրտ 'ի հոգի
Բարերարիդ ելցուք յաւէրժ օրհնաբանս։

Օ՜ի չէ իսկ շատ ազնիւ քրտանց քոց 'ի վարձ
Ականայեռ արքայաձիր մատանին,
Որ թէ արդեօք բերցէ՞ ինչ զարդ քոց մատանց,
Կամ թէ 'ի քեզ գտցէ տեղի զարժանին։

Ուցէ՞ կենաց քոյին Արև լուսապանծ
Փայլէր անմուտ Հայաստանին 'ի սահման,
Եւ 'ի ճրագ սիրոյդ անշէջ և անանց
Դէթ պարծանացս քաղցրիկն վէպ գայր յերևան։

1858. Յուլիս 6
'Ի Դոռմ — Դոքոռ

Յաշակերտաց Ռ—սս—ծնարանի
Մայր — Եկեղեց—ոյ

ԵՂԻԱԶԱՐ Մ. ՄԵԼԻՔԵԱՆ

ԱՂՔԱՏԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ

ՅՕՐԹԱԳԻՒՂ 1858

Սրբազան պարտաւորութիւն մը կը համարինք մեզ ծանուցանել արդէն համազգեաց, որ մօտերս ջատագովութեան արժանի նոր ընկերութիւն մը հաստատուեցաւ Կոստանդնուպոլսոյ Օրթագիւղի մէջ ԱՂՔԱՏԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ անուամբ։ Յիշեալ ընկերութեան նպատակը՝ ինչպէս որ իրեն հրատարակած կանոնագրութենէն ալ կը հասկցուի, Հայազգի աղքատաց վիճակին բարելաւութիւնն է թէ՛ 'ի բարոյական և թէ՛ 'ի բնական մասին։

Յիրաւի՝ չափազանց ուրախութիւն կը պատճառէ մեզ Աղգերնուս մէջ այսպիսի նոր ընկերութեան մը հաստատուիլը, և չենք կարծեր, որ անանկ Հայազգի մը գտնուի՝ որուն սրտին այսպիսի աղգօգուտ նպատակ ունեցող ընկերութեան մը հիմնարկութիւնը բերկրութիւն չի պատճառէ, քանի որ ակներև կը տեսնուի, որ աղքատութիւնը շատ է մեր Աղգին մէջ, և օր ըստ օրէ ճարակելու վրայ ալ է։ Մեր թշուառ Աղգին ներկայ պարագաները և զանազան պատճառներով ունեցած այժմեան դժնդակ կացութիւնը՝ ճշմարիտը խօսելով, սրտաշարժ տեսարան մը կը բանան աշխարհիս առջև, և անբաւական վիրաւորումն կը շարուին Աղգասէր անձանց սրտերուն վրայ. վասն զի՝ եթէ այս կացութիւնը շարունակելու ըլլայ, կործանման ենթակայ պիտի ընէ զայն . . . ։ Մեր Աղգին մէջ ազգասիրական զգացման վրայօք եղած հմտութեան նուազութիւնը, Աղգասիրաց սակաւաթուութիւնը և եղածներուն անպատիւ մնալը, դպրոցներնուս, ճեմարաններնուս կատարեալ կանոնաւոր չըլլալը, թանգարաններնուս, ընկերութիւններնուս և ժողով-

ներնուս խեղճութիւնները, ժողովրդոց թուոյն համեմատ օրինաւոր կանոնաւորներնուս նուազութիւնը, ուսումնասիրութեան և ընթերցասիրութեան պէտք եղածին պէս առաջ չերթալը, ուսումնականաց անարգուիլը, ընթերցասիրաց բաւականութիւն չունենալը, լրագիրներնուս և օրագիրներնուս աղքատութիւնը, իշխանազուններնուս ներկայ պարագաներուն պատճառաւ ազգային բարեկարգութեանց համար յարմար պատեհութիւն չունենալնին, Լայն, Լայն. . . . և այս բոլոր չարիքներէն աւելի ազգային հասարակութեան ընդհանուր աղքատութիւնը եթէ անգամ մը աչքերնուս առջևը առնելու ըլլանք, ամեն մէկերնիս սրտի ցաւօք պիտի աղաղակենք "ո՜ անդարմանելի հիւանդութիւն" . . . . . : Բայց չէ. ճշմարիտ ազգասէրները ճշմարիտ ծնողասիրաց կը նմանին. և ըլլայ որ, եթէ իրենց ընութեանը հակառակ երբէք յուսալէ ալ դադրելու ըլլան, թէ կուգայ անշուշտ այն օրը՝ երբ պայծառ Արփին մեզ համար ալ կը ծագի, տակաւին իրենց բոլոր ճիգը կը թափեն ընելու այն ամեն բաները՝ որոնցմով կը կարծեն թէ իրենց Մայր Ազգին երակները նոր արեամբ պիտի լցուին, և հետևաբար կենդանութիւն պիտի ստանայ :

Այն՝ որ ազգասէր է, չի վհատիր, չի յուսահատիր, չի դանդաղիր, մինչև անգամ չի զարհուրիր ալ որ և իցէ վտանգէ մը. այլ վհատելուն, յուսահատելուն, դանդաղելուն և զարհուրելուն փոխանակ՝ նոր զօրութեամբ կը լեցուի, և մէկէն իր բոլոր էութիւնը կամաւոր զոհ մը կը պատրաստէ ազգակործան թշնամւոյն առջև՝ եթէ գիտնալու ըլլայ, որ զայն յաղթելովը կարող պիտի ըլլայ իւր սիրելի Ազգը ազատելու. ալ ո՛չ Հայր, ո՛չ մայր, և ո՛չ ալ ուրիշ որ և իցէ երջանկութիւն մը կարող է ետ կեցընելու զինքը իր կուրծքը ազգին վնաս հասցուցող թշնամեաց արեանարբու սուրերուն ներկայացընելէն. այնպիսւոյն Հայրը, մայրը, եղբայրը, քոյրը, կինը, զաւկները, աշխարհը, կեանքը, հոգին, և իր բոլոր էութիւնը իսկ սիրելի ազգն է. աղէկ գիտէ այնպիսին, թէ իւր պարտաւորութիւնն է ամեն բարքերէ զրկուիլ, եթէ իւր ազգը ազատելու համար անոնցմէ

զրկուիլ հարկ ըլլայ։ Արդ՝ ո՞ սիրելի աղգակիցք, եկէք Աղգերնուս վրայ ունեցած սէրը գործով ալ յայտնենք. սիլ դանդաղելու ժամանակ չէ. Աղգերնիս կործանման ենթակայ ըլլալու վտանգին մէջն է, և ո՜հ, ովլ պիտի աղատէ զայն, եթէ ոչ իւր որդիքը, որոնք իրմէ կեանք են ստացած. այո՛, ո՞ արենակից եղբարք, պարտինք արթննալ և ընել այն ամենը՝ որուն կը կարօտի մեր Աղգը։

Յայտնի է, որ Աղգի մը չարեաց գլխաւոր պատճառը աղգասիրութեան պակսութիւնն է, յայտնի է նաև, որ աղգի մը հասարակութեան սիրտը աղգասիրութեամբ լեցընելը շատ դժուար է, քանի որ աղքատութիւնը և թշուառութիւնը իրենց ճիրաններուն տակ կը ճմլեն զանոնք։ Արդ՝ եթէ երբէք կը ցանկանք, որ աղգերնիս ամեն կերպով բարեկարգի, պէտք է որ զհասարակութիւնը աղգասէր ընելու ջանանք, և որովհետև աղքատութիւնը անհաշտ թշնամիի նման կ՚արգիլէ զանոնք յիշեալ բաղմահաճոյ առաքինութենէն, ապա ուրեմն օգնենք այնպիսի ընկերութեան մը՝ որուն նպատակը զԱղգերնիս կործանելու սպառնացող թշնամւոյն դէմ յարձակիլ է ամենայն զօրութեամբ։

Օրհնեալ ու արդասաւոր ըլլայ այս նոր ընկերութիւնս. օրհնեալ ըլլան անոր հիմնադիրը և իր օգնականները. օրհնեալ ըլլան նաև այնպիսի բարերարք՝ որ ասանկ աղգօգուտ ընկերութեան մը յառաջադիմութեանը համար չեն խնայեր իրենց ձեռնտուութիւնը։ Ամենակարողն բաղուկները պաշտպանեն այս ընկերութիւնս. Անոր ամենատես աչուքները հսկեն նորին հիմնադրին և իր օգնականներուն վրայ. որոնք այսպիսի գովելի եղանակաւ մը կ՚ուզեն հալածել Աղգերնուս մէջեն զաղքատութիւնը, և անով փարատել այն մութ ամպերը՝ որոնք ջանդէք ը-սա-որ՝ Արփւոյն ճաճանչներէն կը զրկեն զմեզ։

Ի՜նչ մեծ մխիթարութիւն մըն է այս աղգասիրաց համար, և ովլ արդեօք չպիտի վառուի այս ընկերութեանս նպաստամատոյց ըլլալու իր կարողութեանը չափ։ Կը գտնուի՞ արդեօք

այնպիսի Հայ մը՝ որ անմխիթարներուն մխիթարութիւն ընծայող, շատոնց արտասուաց զոհ եղող աչուքներուն արտասուքը սրբող, շատ թշուառներուն ցնծութիւն պարգևող, խղճալի աղքատաց ուրախութիւն տուող, որբերու Հայր և այրիներու պաշտպան եղող, վերջապէս իւր Հայրենիքէն հեռու անմխիթար Ազգերնուս հոգի տալու դիտմամբ հաստատուած ընկերութիւն մը նախատէ, անոր հիմնադիրը պարսաւէ, անոր գործակիցները ծաղրէ, և անոր օգնականները ետ կեցընէ իրենց ըրած օգնութենէն։ Միթէ այս ընկերութիւնս ալ պիտի հանդիպի այնպիսի ճիւաղներու՝ որ իրենց մասնաւոր յատկութիւն մը ըրած են ուրիշներուն ըրածին չի հաւնիլը, և իբր ոսերիմ թշնամիներ անոնց վրայ յարձակիլը. չընե՞մ միթէ այս հարցումները. քանի որ քաջ գիտեմ, որ անպատճառ պիտի գըտնուին այնպիսի ազգատեաց ճիւաղներ՝ որ պիտի ելլեն և կարելի է ամեն զօրաւոր միջոցներով այս ընկերութեանս հիմնայատակ ըլլալուն պիտի աշխատին... բայց հոգ չէ՛, թող ընեն, միայն սա ալ գիտնան, թէ Երկնից պատուհասը պատրաստ է այսպիսեաց համար. որոնք չէ թէ միայն օգուտ մը ընելը չեն խորհիր ո՛չ իրենց Ազգին, և ո՛չ իրենց ընկերին, այլ նաև բոլոր ճիգերնին կը թափեն բնաջինջ ընելու այնպիսի հոգիները՝ որ իրենց մարդկութիւնը և պարտականութիւնը ճանչնալով՝ ճակատաբաց յառաջ կուգան իրենց Ազգին անսարանին վրայ և ինքզինքին կը նուիրեն ծառայելու այն Ազգին համար՝ որ իրենց կեանք է մատակարարեր։

Արդ՝ ո՛ ճշմարիտ ազգասէրք, չըլլայ որ դուք ալ թունաւորուիք յիշեալ ճիւաղներէն, այլ երկնցուցէք ձեռուքներնիդ այս նոր ընկերութեանս, և շնորհեցէք յօժարութեամբ ինչ որ Ձեր կարողութեանը տակ կ'ինայ, յիշելով մեր Տիրոջը Յիսուսի Քրիստոսի սա խօսքը թէ, "Գրանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն"։

Կը յուսանք, որ ազգային բոլոր լրագիրներն ու օրագիրնե-

ը պիտի յաժարին այսպիսի օգտակար ընկերութեան մը շարունակ ջատագով հանդիսանալու. կը յուսանք նաև, որ մեր Հնորհափայլ Վարդապետները չի պիտի մոռնան Եկեղեցեաց մէջ գովելու այս ընկերութիւնս, և յորդորելու զհասարակութիւնը, որ իրենց ողորմութեամբը լեցուն են գանձանակները. բարեկրօն Պահանջք ևս պիտի հաճին անշուշտ իրենց հովանաւորութեանը յանձնուած ժողովուրդը խրատելու՝ այս ընկերութեանս ձեռնտու ըլլալու համար. վերջապէս կը յուսանք, որ բոլոր Հայազգիք իրենց պարտաւորութիւնը կատարելով՝ ջանք ընեն պիտի նաև համոզելու իրենց բոլոր եղբայրները, որ ընկերութեանս յառաջադէմ հանդիսանալուն օգնական ըլլան. և ասոնցմէ 'ի զատ՝ վստահ եմք ըսելու, թէ ազգային զանազան տեսակ ժողովներուն ազգասէր Անդամները չի պիտի խնայեն այս ընկերութենէն ձեռուընուն եկած օգնութիւնը, և զանոնք քաջալերելու համար մասնաւոր սէր ու խնամք մը պիտի ունենան անոր վրայ։ Ասոնք այսպէս ըլլալով՝ շուտ պիտի հասնի այն ցանկալի օրը՝ որուն կ'սպասեն այս ընկերութեանս հիմնադիրները և իրեն գործակիցները 'ի նշան այն սիրոյն՝ զոր ունին իրենց սիրելի Ազգին վրայ։

Կարծեմք թէ, պիտի ներեն մեզ ընկերութեանս սիրայօդ անդամները, եթէ մէկ քանի խօսք ալ իրենց զրուցելու ըլլանք. որոնց, լաւ գիտեմք, թէ կարօտութիւն չունին՝ իրենք. բայց և այնպէս իրենց յաջողութեանը համար մեր սրտին զգացած եռանդը կ'ստիպէ զմեզ յիշեցընելու իրենց, թէ իրենց նպատակին հասնելու համար՝

Նախ՝ ընկերութեանս անդամները պարտին եղբայր կոչել զիրար և իբրև ճշմարիտ Ազգասէրներ մասնաւոր սէր մը ունենալ իրարու վրայ. ահա ասով կրնան իրենք մէջերնին շարունակ միաբանութիւն պահել։

Երկրորդ՝ մեծ զգուշութիւն պահելու են իրենց մէջ անփորձ մէկը չընդունելու։

Երրորդ՝ ամեն մէկ անդամ պարտի զինքը ընկերութեան

տէրը և դատախազը ճանչնալ. և չէ թէ միայն ականջ չի կախէ ամեն անոնց՝ որոնք զանազան վարպետութեամբը զիրենք իրարմէ բաժնելու պիտի աշխատին. այլ նաև իբր նախանձաւոր ընկերութեանս՝ յորդորելու, խրատելու և յանդիմանելու են ամեն անոնք՝ ո՛ր այս ընկերութեանս հակառակորդը ըլլալ կը ցուցնեն զիրենք ո՛ր և իցէ կերպով:

Չորրորդ՝ միշտ խուլ ըլլալու են ամենայն ամբաստանութեանց՝ որ իրենց վրայօք հասարակութեան մէջ կը շրջին:

Հինգերորդ՝ անդատասխանի ձգելու են այնպիսի հրատարակութիւնները՝ որ անխոհեմութեամբ և հակառակասիրութեան ոգւով իրենց դէմ թշնամաբար տեղի կ'ունենան:

Վեցերորդ՝ պարտին միշտ հրատարակութեր ընել՝ զհասարակութիւնը յաղքատասիրութիւն յորդորելու:

Եօթներորդ՝ երբեմն երբեմն հրատարակելու են ընկերութեան ինչ վիճակի մէջ գտնուիլը, ելևմտից հաշիւը, և այլն, և այլն:

Այս ամենէն վերջը՝ հաստատ որոշում մը ընելու են բնաւ չի վհատելու կամ չի յուսահատելու՝ այլ արիութեամբ և քաջութեամբ գործը 'ի գլուխ հանելու. որով և մեծ փաստ մը ըլլան թէ, գործը Հայոց ԸԼԼԸՐԸՆ համար չէ խոչանիր. քանի որ հիմա՝ ցաւալի է ըսելը, գրեթէ սովորական առած մը եղած է սա խօսքը թէ՝ Հայոս ԲՐՆԱԾ գործը չէ յաջողիր. և ո՜հ, որքան դժնդակ է մեզ, որ այսպիսի դարու մէջ դեռ այս անվայել խօսքը ըսել կուտանք թշնամիներնուս. բայց կը յուսանք, որ ժամանակը վերջապէս այս պարսաւելի առածը կը հալածէ մեր մէջէն: Կը վերջացընենք յօդուածնիս առ այժմ, յուսալով որ ուրիշ պատեհութիւններ ալ ունենանք յիշեալ ընկերութեանս վրայօք աւելի մանրամասն և աւելի ուրախաւէտ յօդուածներ հրատարակելու 'ի բերկրութիւն ամենայն ճշմարիտ Հայոց և Ազգասիրաց, և 'ի յանդիմանութիւն ամենայն ազգատեացներու:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄՈՒՐԱՏԵՑ ՊՕՅԱՃԵԱՆՑ

Աբդարև քաղցր է Հայրենասիրաց անոնց յիշատակը՝ որ իրենց Ազգին օգտակար կերպով ծառայեցին, և իրենց կենաց ընթացքը արդիւնաւոր ձեռնարկութիւններով աւարտեցին: Ուրեմն կը համարձակինք ըսելու, որ ազգային հրապարակական տետրի մը սրբազան պարտաւորութիւնն է երբեմն իր էջերը այսպիսի բազմարդիւն անձանց կենսագրութեան նուիրելը՝ անոնց յիշատակը Ազգասիրաց ներկայացընելու և անմոռաց պահելու համար:

Յիշեալ անձանց կարգէն ըլլալով Յարութիւն Մուրատ Պոյաճեանց՝ անոր վարուց պատմութիւնը՝ համառօտիւ արգոյ ընթերցողաց հաղորդելը քաղցր պարտականութիւն մը կը համարինք մեզ, և նորին հրատարակմանը կը փութամք:

Որչափ երջանիկ պիտի համարէինք զմեզ, եթէ բարեսէր անձինք իրենց գիտցածներէն երբեմն այսպիսի կենսագրութիւններ մեզի հաղորդելու յօժարէին:

"Յարութիւն Մուրատ Պոյաճեանց ծնաւ 1801 թուականին Ասիական Տաճկաստանի Ռերիա քաղաքը. որ իր տղայութեան հասակին մէջ ծաղիկ ըսուած ախտէն բռնուելով աչուընկերէն մէկուն տեսողութիւնը կորսընցուց: Հայրը Պ. Աբրահամ Պոյաճեան Պոյաճեանց ուսումնական անձ մին էր, և յիշեալ քաղաքին ազգային դպրոցին մէջ ալ վարժապետ մը ըլլալով իր որդւոյն նախնական դաստիարակութեան հոգը իր վրայ առաւ, և վերջը ուսումնական դասատուի մը յանձնեց զայն. որմէ Ռերականութիւն Հայկական լեզուի, Դ՝արտասանութիւն ու Եկեղեցական երաժշտութիւն սորվեցաւ Յ. Մուրատ բաւական յաջողակութեամբ: Յ. Մուրատ իր դե-

ռաբողբոջ հասակին մէջ հանճարեղ և ուսմանց եռանդովը վառեալ ըլլալով՝ միայն դասատուէն սորվածովը չի բաւականացաւ, այլ Ռերիա գտնուող Եւրոպացիներէն Իտալերէն լեզուն ալ սորվեցաւ. որուն ուսումը վերջէն իր անխոնջ ջանիքը կատարելագործեց։ Արաբացւոց լեզուն իր հօրմէն սորվեցաւ։ Ռերիա բնակող Իտալացիէ մը քիչ մը ընդօրինակութիւն ալ դաս առած ըլլալով՝ անոր ուժովը պատկերհանութեան արհեստն ալ 'ի գործ կը դնէր։ Այն միջոցները՝ որ Յ. Մուրատ զանազան ուսմամբք կը զարդարէր իր միտքը՝ հայրը Պ. Աբրահամ քաղաքէ քաղաք վաճառականութիւն ընելու կը ղրկէր։ Երբոր Յ. Մուրատ չափահաս եղաւ՝ առաջ Ամենթապի ու վերջը Օէյթունի մէջ դասատուութեան պաշտօնը վարեց. ուր եկեղեցեաց համար պատկերներ ալ կը գծագրէր։ Ամենթապի մէջ իր առաջին աշակերտը եղաւ Թէոթահիայի Առաջնորդ հանգուցեալ Տ. Թովմաս Վարդապետը։

"1823 թուականին Յ. Մուրատ առևտրական գործով մը Կ. Պոլիս եկաւ. հօրը ընկերակցութեամբը. ուր գործերնին լմընցընելէն վերջը՝ Մտաբաղար դարձան։ Այն տեղի Լայազգի բնակիչները այս երկու անձանց բարի բնաւորութեանը համար՝ չափազանց համակրութիւն մը ունեցան ասոնց վրայ. վասն զի երկուքն ալ անդին ասդին հաւաքուած ընկերութեանց մէջ մտնելով՝ կը կրթէին զանոնք։ Երկու տարի չափ Մտաբաղար կենալէն վերջը Ամենթապ վերադարձան։

"Այս միջոցին էր երբոր Մէհէմմէտ—Ալի փաշան յիշեալ քաղաքը պաշարած էր. ուր Յ. Մուրատայ հայրը Պ. Աբրահամ իր մահկանացու ընթացքը կատարեց։ Յ. Մուրատ այս անակնուանելի դիպուածէն վերջը զանազան թշուառութեանց և ձախորդութեանց ենթակայ ըլլալով՝ քաղաքին պաշարումը դադրելէն վերջը կրկին Մտաբաղար վերադարձաւ։

"Մտաբաղար հասնելէն վերջը՝ Արմաշու վանքը ուխտագնացութիւն մը ըրաւ. ուր նոր հաստատուած ուսումնարանին առաջին դասատու ընտրուեցաւ 1828ին Օմիւռնիոյ առաջնորդ

դերապատիւ Տ. Պօղոս Աբբեպիսկոպոսին հովանաւորութեանը ներքև։ Յ. Մուրատ բժշկական արհեստին ալ քիչ մը հմտութիւն ունենալով՝ դպրոցին աշակերտացը մտաւորական և բարոյական պիտոյքին հոգալէն 'ի զատ՝ անոնց մարմնական բարեկեցութիւնն ալ կը մատակարարէր. ասով բոլոր ուսանողաց սիրտը ամենայն կերպիւ իրեն գրաւեց. որով յիշեալ դպրոցը քիչ ժամանակի մէջ բաւական պտուղ հասցոյց։ Դպրոցէն ելլող աշակերտներէն իւրաքանչիւր ոք տեղերնին վերադարձած ժամանակ՝ այն տեղերուն մանկտւոյն մէջ ուսման լոյսը սարածելու գործիք եղան. որք են՝ Աբմաշ՝ Պ. Յովհաննէս Մաւեան, և Տ. Ստեփան քահանայ։ Յատաբաղար՝ Պ. Բռաքել։ Ի Պահէճիք՝ Տ. Սահակ և Տ. Մեսրոպ քահանայք, և հանգուցեալ Յակոբ աղայն Կ. Մկրեան։ Կէյվէյի Յորթագիւղ՝ Պ. Յակոբ Պէյլերեան։ Ի Զէնկիլէր՝ Տ. Կարապետ քահանայ։ Բաղար գիւղի Յորթագիւղ՝ Տ. Ա՛րթանէս քահանայ։ Յիւսկիւտար՝ Տ. Կարապետ քահանայ։ Ի Կիւռլէ՝ Տ. Պօղոս քահանայ։ Դեռ Աբմաշու աղգային ուսումնարանին մէջ դասատուութեան պաշտօնը կը վարէր, երբ Նիկոմիդիա գալով՝ ամուսնացաւ պարկեշտասուն օրիորդի մը հետ. որմէ հինգ զաւակ ունեցաւ։"

"1843 ին ընտանեօքը հանդերձ ուխտագնացութիւն մը ըրաւ 'ի Սուրբ Երուսաղէմ. ուր Ս. Յակոբեան ուխտին անդամոցը դասատու կարգեցաւ երկու տարի՝ հանգուցեալ Ամենապատիւ Օ՛աքարիա Պատրիարքին ստիպմամբը. և հոն քանի մը աշակերտ հասցուց. որոց մէկ քանին հոս տեղ յիշելը արժան կը դատուի. որք են Տ. Կարապետ Վարդապետ երբեմն փոխանորդ Պատրիարքին Երուսաղէմայ, Տ. Յակոբոս Վարդապետ Կեղիպօլուցի, և Մահտեսի Թադեւոս աղա Դէսլեան։"

"Երկու տարիէն վերջը վերստին Նիկոմիդիա վերադառնալով՝ իւր բնակութիւնը հոն հաստատեց. որմէ ետքը Աբբունի Վարդապետ Տատեան Մեծարգոյ Յովհաննէս Պէյը Նիկոմիդիոյ թէմին բոլոր դպրոցներուն հոգաբարձութիւնը իրեն

յանձնեց։ Յ. Մուրատ անխոնջ ջանքք և յարատև հոկմամբ յիշեալ թէմին բոլոր դպրոցներուն պցելութեան կելլար, և զանոնք օր ըստ օրէ կը բարեկարգէր առանց ծախք ու հանգստութիւն խնայելու։ Բարեյիշատակ Յ. Մուրատ մասնաւորապէս ՊահէՀիքի ազգային վարժարանը բարեկարգեց, ներքին կանոններ սահմանելով։ Նիկոմիդիոյ ազգային քաղաքական ժողովոյն սահմանուած ատենը՝ տեղացւոց խնդրանօքը Յ. Մուրատ ալ անդամ և ատենադպիր կարգեցաւ յիշեալ ժողովոյն, և արժանապատիւ Տ. Եփրեմ Վարդապետին գործակցութեամբը՝ նոյն ժողովոյն բարեկարգութեանը համար կանոններ շարադրեց։ Նիկոմիդիա և իր բոլոր շրջակաները դեռ ուրիշ շատ բարեկարգութիւններ և գեղեցիկ հետևութիւններ կ'սպասէին Յ. Մուրատայ տաղանդէն, երբ [illegible] ըսուած հիւանդութիւնը անոր պատուական կենաց թելը խլեց. 1848 Յունիս 25 ին ուրբաթ օրը՝ իր բոլոր բարեկամները և զինքը ճանչցողները և համայն Նիկոմիդիոյ շրջակաները անմխիթար սգոյ մէջ թողուլ։"

ՊԱՀՉԷՃԻՔ ԿԱՄ ՊԱՐՏԻԶԱԿ

Ինչպէս որ Յարութիւն Մուրատայ կենսագրութեանը մէջ ակնարկեցինք, Նիկոմիդիոյ և իր շրջակայները գտնուած գիւղերուն գրեթէ բոլորին ալ բնակիչները յիշեալ բարեյիշատակ անձին կը պարտաւորին իրենց բարոյական և մնաւորական յառաջադիմութիւնը։ Եւ որովհետև Տիրոջը խօսքին համեմատ "ծառը իւր պտուղէն կը ճանչցուի", ուստի արժան կը համարինք Նիկոմիդիոյ մօտը գտնուած Պահչէճիք ըսուած գիւղին բակէացը վրայ փոքր ինչ տեղեկութիւն տալու՝ յիշեալ Յ. Մուրատայ տաղանդէն յառաջ եկած արդիւնքը կամ պտուղը ակներև ցուցընելու համար։

Պահչէճիք ըսուած գիւղը՝ որ Նիկոմիդիոյ դիմացը կ'իյնայ, կը բաղկանայ հազար երկու հարիւրի չափ տուներէ. որոնց բոլորն ալ հայաբնակ են։ Յիշեալ տեղը ասկէ 60—70 տարի առաջ աննշան գիւղ մըն էր հազիւ հազ երկու հարիւրի չափ տունով։

Որովհետև մեր նպատակը Յ. Մուրատայ արդիւնքը յայտնել է, ուստի մէկդի թողլով այլ և այլ բաները՝ խօսիմք միայն թէ որքան յառաջադիմութիւն ըրած է յիշեալ գիւղը թէ ուսումնասիրութեան և թէ ազգասիրութեան մէջ։ Յոյս ունինք, որ քիչ ժամանակէն նախանձելի օրինակ մը պիտի ըլլայ ուրիշ հայաբնակ գիւղերուն բնակիչացը։

Առանց երկար ստորագրութիւն մը ընելու՝ համառօտիւ խօսինք այն բաներուն վրայ՝ որոց ականատես եղանք 1858 Օգոստոս ամսոյն մէջերը մասնաւոր պատճառաւ մը հոն երթալու պարտաւորեալ ըլլալով։

Օգոստոս 18 ին առտուն Նիկոմիդիայէն ճամբայ ելլելով կէս օրին մօտ հասանք Յիշեալ Պահէճիք գիւղը։ Պաղցր է հոս յիշելը, թէ մեր յուսացածէն աւելի հիւրասէր սրտից և մարդասիրական զգացմանց հանդիպեցանք։ Գիւղացւոց աղնիւ զգացումները և բնաձիր քաղցր բնաւորութիւնին ստիպեցին զմեզ, որ խօսինք իրենց՝ ինչ որ օգտակար կ'երևնար։ Եւ մեր ուրախութիւնը չափազանց կ'առաւելուր, երբոր կը տեսնէինք, որ ազգային յառաջադիմութեան վրայ եղած խօսակցութիւնները լսելու աւելի յօժարամիտ էին։ Հ'շմարիտը խօսելով՝ Պահէճիքի ազգակից եղբայրներնիս բաւական ընդարձակ իմացականութեան ալ տէր են։

Օգոստոս 19 ին օրը յայտնեցինք գիւղացւոց այն փափաքը՝ զոր ունէինք աւանելու թէ՝ հոն աեղ հաստատուած ընթերցասիրաց ընկերութեան արգոյ անդամները, թէ՝ Ազգային դպրոցին աշակերտները. որոնք նախնեաց կիւրակէին տարեկան քննութիւններին տուած ըլլալով՝ մէկ քանի օրուան համար ազատութիւն շնորհուած էր իրենց։ Մեր խնդիրը սիրով ընդունուելով՝ տարուեցանք նոյն օրը ընթերցասիրաց ընկերութեան թանգարանը, ուր ներկայ էին յիշեալ ընկերութեան արգոյ և սիրայօդ անդամները. որոց ամեն մէկուն ճակատին վրայ ազգային սիրոյ բոցը գեղեցիկ կը վառէր։ Հոն եկան նաև դպրոցին աշակերտաց յառաջադիմներէն ոմանք. որուն վրայ չափազանց ուրախանալով՝ սկսանք մեր սրտին գոհունակութիւնը յայտնել դպրոցին ազգասէր հոգաբարձուացը, և սկսանք յայտնի քարոզել, թէ ազգասիրութիւնն է մարդուս գլխաւոր պարտականութիւնը։ Ասոնցմէ վերջը՝ տղայոց դասերը սկսան քննուիլ մեր կողմանէ, և աշակերտաց ամենէն մեծը հազիւ 14 տարեկան կար։ Քննուած դասերուն նիւթերն

էին Հայոց պատմութիւն, Բերականութիւն Ազգային լեզուի և ճարտասանութիւն։ Ո՛չմարիտը խօսելով՝ այնպիսի գեղեցիկ պատասխաններ ընդունեցինք՝ որ բնաւ չէին յուսացուեր այսպիսի գիւղի մը մէջ այս տեղի մեր համբաւաւոր դպրոցներուն հետ բաղդատելով։ Բերականութեան դասերուն մէջ գտնուած օրինակներուն գրեթէ բոլորն ալ Հայոց պատմութենէն առնուած էին, (ի՛նչ գեղեցիկ միջոց) նոյնպէս և ճարտասանական օրինակները։

Բաններին աւարտելէն վերջը՝ աշակերտաց ամենէն մեծը գեղեցիկ ճառ մը կարդաց. զոր որ առանց փոփոխութեան կը հրատարակեմք հոս 'ի խրախոյս այլոց աշակերտաց յիշեալ դպրոցին և իմաստին աղնուութեանը համար։

Ահա յիշեալ ճառին օրինակը.

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՏԱԳՈՎԵԼՈՒ ՄԸՌ

Բարեբաղդ և երջանիկ կը համարի ինքը տաճարս, տեսնելով զՀեզ ժողուրդուած՝ Ազգասէր տեարք, միաբանական քաղցր սիրոյն անխզելի կապերովը կապուած, և միանգամայն Հայրենասիրութեան հրավառ եռանդեամբը բորբոքուած՝ իւր ընդարձակ գեղեցկաճեմ սրահին մէջը. ո՜վ մեծի ուրախութեանս։ Ուստի և նուաստս ալ անսպառ ուրախութենէ շարժեալ գրգռեալ՝ կը համարձակիմ այսօր Հայրենասէր ունկնդրացդ ներկայութեանը՝ համառօտ կերպով խօսիլ գիտութեան որպիսի ամենահարկաւոր ըլլալուն վրայ։ Ներեսոր աչքերնիս վեր վերցնելով գիտենք այս մեծատարած աշխարհիս վրայ, և հարցընենք թէ աշխարհիս ամենէն անղուգական և անհամեմատ բանը ո՞րն է, իսկոյն անմիջապէս երկրիս հորիզոնէն ձայնիս արձագանգը կը գոչէ ըսելով "գիտութիւնն է"։ Բանզի գիտութեամբ՝ մարդս միշտ երջանիկ վիճակի մէջ կը հանգստանայ. գիտութեամբ՝ մարդուս երևակայութեանը վրայ մէկ գեղեցիկ լուսաւորութիւն մը կը փայլի, ինտոր որ տիեզերատարած Արեգակը իրեն ճաճանչագեղ նշոյլներովը բոլոր Աշխարհս ծիրանափայլ կը լուսաւորէ, այսպէս և գիտութիւնը զմարդս կը

լուսաւորէ իրեն անոպառ լուսովը։ Գիտութիւնով երկրիս ազգաց նախանձելի պիտի ըլլանք, այն ազգերուն կրսեմ՝ որոնք որ այս դարուս մէջ գիտութեան լուսաւորութեամբը կը պարծենան։

Գիտութիւնով Ընոյ կիսակործան տաճարները պիտի վերականգնենք, որն որ հիմա, աւաղ, ոչխարներու փարախ եղած աւերակներու կոյտ մը դարցած է։ Երդ՝ ազգասէր տեարք, այժմ գիտցա՛ք գիտութեան ի՞նչ անզուգական ըլլալը. գիտցա՛ք արդեօք անկէ յառաջ եկած օգուտները. գիտցա՛ք անոր անհամեմատ ըլլալը այս աշխարհիս վրայ։ Ո՜հ, ուրեմն ո՞րչափ ցանկալի բան է գիտութիւնը ընդգրկել իրրև զեղբայր հարազատ։

Ո՜վ ազգասէր տեարք և պատուական պարոնայք, խորհրդակից կը կոչեմ զՁեզ այս վայրկենիս մէջ. ի՞նչպէս կրցեր են Եւրոպացիք աշխարհիս այսչափ մարդկային խելքէ վեր եղած բաները հնարել. ո՞չ ապաքէն գիտութեան ձեռքով. ո՞չ ապաքէն անոր նշուլներովը լուսաւորվելով. ի՞նչպէս կրցեր են այն քաղաքակրթեալ ազգերը երջանկութիւնը գտնել, և իրենց անունները անմահացընել աշխարհիս մէջ։

Ուստի յայտնի է, թէ ազգ մը կամ մարդ մը՝ թէ որ միտքը մշակուած ըլլայ 'ի մանկութենէ դպրոցին մէջ, ան ազգը կամ այն մարդը յամենայնի կը յառաջանայ, յամենայնի կը բարեկարգի։

Երդ՝ ազգասէր տեարք, եթէ այսպէս, ի՞նչու պիտի չանք չընենք մենք քաղաքակրթեալ ազգաց կարգը անցնելու. քանի որ Հայ ենք, քանի որ բեղկործան Հայկայ սերունդ, ինչու դեռ կը ննջենք. ահա դիշերուան մառախլապատ ամպերը գացին ահետացան, ու անոնց տեղը յաջորդեց առաւօտեան ծիրանափայլ արշալոյսը. եկէք, սիրելի Հայրենասէրք, նախնի քաջաց առաքինեաց Հայրենասիրութեան հրավառ բոցովը բորբոքուած՝ մտքերնիդ բերէք թէ դուք ալ այնպիսի հարց սերունդներ էք. Ձեր երակներուն մէջ խաղցած արիւնն ալ՝ նոյն Հայկազեան քաջերուն արիւնն է.

Ուրեմն՝ եկէք հայրենասիրութեան և ուսումնասիրութեան եռանդեամբը բորբոքինք, որով ըլլանք ճշմարիտ Հայ և Հայկայ ճշմարիտ սերունդներ. որով ըլլանք Հայաստան աշխարհին պարծանք և փառք մերոց Հայրենեաց։

Այս յորդորներս առ Ձեզ ուղղելէս վերջը՝ կ'աղաչեմ խո-

նարհարար, Ազգասէր տեարք, որ Ձեր սիրալիր ակնարկութիւն-ները՝ ինքոր որ առաջ, անանկ ալ ասկեց վերջը անպակաս ընէք մեր յետինները վրայ. ըստ որում՝ նաև անպակաս ը-ըած են և կ'ընեն միշտ մեր սիրայօդ ընկերութեան յարգա-պատիւ անդամները. որոնց և Ձեզ Ազգասիրացդ՝ արդէն յայտ-նած եմք մեր խորին ու անկեղծ շնորհակալութեան հաւաս-տիքներս։

Ուստի՝ և մեր գոհունակութեան աղօթքը կը մատուցանեմք առ բարձրեալն Աստուած անմոռաց երախտագիտութեամբ, որ զմեզ ասանկ ոսկեղէն դարու մը մէջ հասուցեր է, ու ասանկ Ազգասէր պաշտպաններու հովանաւորութեանը տակ. որուն երկրպագելի անունը օրհնեալ ըլլայ յաւիտեանս յաւիտենից։

ՆՇԱՆ ԱՑՎԱԶԵԱՆ

Աշակերտ Ազգային Վարժարանին Պարոնլեռ։

Այս ճառը կարդացուելէն վերջը՝ աշակերտները իրենց քաղցր ներդաշնակութեամբը ազգային երգ մը ևս երգեցին. որուն թէ իմաստը և թէ եղանակը այնպիսի շարժեցին սրտերնիս, որ ալ չի կրցինք բռնել ուրախութեան արտասուքները. և մի-այն այս խօսքն ալ ըսելով, թէ "Երկնից օրհնութիւնը վրա-նիդ տեղայ" սկսանք հեռանալ թանգարանէն։

Կը յուսամք, որ բոլոր ազգակիցներնիս ալ սրտերնուս ցն-ծութեանը մասնակից ըլլալու պիտի աճապարեն տեսնելով այն յառաջադիմութիւնը և այն ազգային եռանդը՝ որ կը տեսնուի յիշեալ դիւղին ժողովրդոցը վրայ։ Կը յուսամք նաև, որ իւ-րաքանչիւր ոք իր պարտականութիւնը ճանչնալով՝ ըստ կար-եաց իւրոց պիտի աշխատի ազգային սիրոյ բոցը ամեն տեղ ար-ծարծելու, և ետ չի կենալու 'ի գործ դնելէն այն ամեն միջոց-ները՝ որոնցմով մեր սիրելի Ազգն ալ օր մը քաղաքականաց-եալ ազգաց կարգը դասուելու երջանկութիւնն ու մխիթա-րութիւնն ունենայ։

Հետեւեալ նամակը՝ ինչպէս որ ստորագրութեան թուականէն ալ յայտնի կը տեսնուի, ակէ գրեթէ երեք ամիս առաջ ընդունած էինք շնորհափայլ Տ. Մամբրէ վարդապետին կողմանէ. բայց նիւթերուն շատութիւնը չներելով մեզ մինչեւ ցայժմ՝ նորին հրատարակումը այս տետրակին պահեցինք։ Մեր խորին երախտագիտութեան հաւատիքը յիշեալ շնորհափայլ վարդապետին հրապարակաւ յայտնելու համար սոյն նամակին հրատարակումը յուսանք թէ ներելի ըլլայ մեզ։

Ազգասէր Արդոյ խմբագիր Մուսայից Մասեաց

Մինչդեռ Ձեր ճարտար ներդաշնակաւոր մատանց հետ ձեր Ազգասիրութեան բանաստեղծ աշխոյժ ոգին ալ միասնացեալ իւր Հայոց դիւցազանց անմահ ու յիշատակաց արժանի անունները քնարելու և երգելու թատերական սիրուն ամնաթերթիդ մէջ, մինչդեռ այն մեռելատիպ քնարներուն վրայէն սլացած ունկնագրաւ երգոց մրմունջները և հնչած անոյշ ձայները Հայկազանց սրտի լալերուն դպան, Հայկը ու իր Աւագորեարը իրենց հարազատ զաւկներուն սրտին մէջը մեկտեղ կենդանութիւն առին։ Հապա բուն Հայաստանցիի մը պանդուխտ Հայրենակարօտ անձի մը սրտին թելերուն արդեօք քանի՞ խորամուխ ազդեցին Հայաստանի պարծանքներուն ձայնը, և ո՞րչափ արագ ու խնդալից էր այն ձայնին դարձուցած արձագանգը. այո՛ արագ ու խնդալից էր, բայց անբաղդաբար տեղւոյն հեռաւորութիւնը ու անպարմարութիւնը ան ատեն խզդելով այն արձագանգը, այն արձագանգը՝ որ ամենաբարձր անձկութեամբ շնորհակալիքս ունէր ձեզի բերելու. և վերջապէս չյաջողեցաւ։ Իմա՝ Արդոյ խմբագիր. շնորհ մեծ ունիմ Յերկնից, որ ձեզի անձամբ մօտ գտնուելու բարեյաջող պատեհութիւն ունենալով՝ կը զօրանամ՝ ի վաղուց սրտիս մէջ արթնցած շնորհակալութեան ձայնը առ քեզ հասցընելու։ Դուք և ձեզի նման վառվռուն սիրտ ունեցող ուսումնական Ազգասէրներ Ազգին Յոյսն ու քաջալերութիւնն էք. Յոյսը էք ալ նէ՝ վերջապէս Ազգին ապագայ բարեբաղդութեան և երջանկութեան շինուածին նեցուկներն էք. անոնք իրենց Յոյսը այսօր ձեր և ձեզի պէսներու անխոնջ ու եռանդուն ջանասիրութեանց վրայ խարսխած են։ Համբերութեամբ կը յուսանք օր մը բարեբաղդաբար Ազգերնիս տեսնալու, բարեգուշակ ներկային լոյսը ապագային վրայ քիչ մը ձգելով։ Մինչդեռ

կը տեսնանք որ մէկը բանասիրական օրագիր մը կը հրատարակէ, մէկալը ուսումնական Աղգայոյս ընկերութիւն մը կը կազմէ. մէկը Աղգին դպրոցները զանազան ուսմունքով ու բարեկարգութիւններով ճոխացընել կը ջանայ և միւսն ալ տպարանի նպաստաւոր միջոցաւ Աղգին գրականութիւնը շատցունելու և տարածելու ճգանց մէջն է, որով ուսմանց ու գիտութեանց արագ զարգացմանն ալ Առաջնորդ կ'ըլլայ:

Ա՛նծարգոյ Աղնի՛ւ խմբագիր, այս օրինակ խրախոյսներ որ շատ անգամ ուրիշներէն ընծայուած է ձեզի. մենք միւսանգամ մանրամասնաբար տողելու եռեռէն չէյնալնուս ներեցէք, վասն զի առջևնիս բացուած ճանապարհորդութիւնը որ ձեր սիրած Հայաստանը և մեր Ամենասիրելի ու ցանկալի Հայրենի գաւառը պիտի հանէ զմեզ՝ յերկար գրելու չի ներեր, և չներեց որ ձեզի հետ տեսաւորելով գոնէ ձեր պատուական Ամանթերթին բաժանորդ գրուելուս բազմաբեայ փափաքն ալ անձամբ յայտնէի, սակայն այսքանս աղդարարելէն զկնի անտարակոյս եմ, որ զմեզ ալ ձեր Աղգասէր բաժանորդագրաց թիւերուն կարգը անցունելով՝ առ ժամս մեր սիրտը գոհ ու շնորհապարտ ձգելու չափ մէկ ձեռք օրինակ մը շարունակ կը փութայք մեզ զրկելու: Ցս մեք ըստ մերովսան ձեր Հայրենասէս և Հայրենասէս պատուական Ամանթերթին սիրելի Հայաստանցիներուն շատերուն հաղորդելու և բաժանորդները բազմացընելու ջանքը ամենեին չմոռանալու պարտաւորութեամբ այժմէն կ'ուխտեմ անձինս, որ Հայաստանէն ձեր Հայրենասէր հնախնդիր մտաց որոճ երբեմն պիտի փութամ հնարաւոր եղածին չափ տեղեկութիւններ ժողվելու զրկելու, և երբեմն ալ Հայոց վաղեմի Դաշոց վրայ երգուած սրտաշարժ հին ու անոյշ բանաստեղծական երգերը. զորոնք՝ թէ հաճի Աղգասէր Հեղինակդ՝ Ասահաց Ասուսայից հիւրընկալ թիւերուն մէջը կը պատուէ 'ի պատիւ Աղգիս նախկին պարծանքներուն:

Ողջունիւ Մեծարանաց
Մնամ Արժանայարգ Հեղինակիդ
Անճնանուեր բարեկամ
ՄԱՄՈՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ
ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

16 Յ--Լ-, 1858
Կ. Պոլ-. 'Ի Խ--ԷՒ-Ղ

Մեղմ պատասխանը բարկութիւնը կ'ինջեցնէ · բայց խիստ խօսքը բարկութիւնը կը գրգռէ։ (Սողոմոն. Առակ. ԺԵ. 1)

Երբեմն յայտնի է արգոյնութիւնը ոչ շատերուն, որ բաւականաժամանակէ 'ի վեր Հայաստանի տիկնայց հագուստը փոխելու խնդրոյն վրայօք վիճաբանութիւն մը կը շարունակուի Հայաստանի Օրերունեաց մը, Առաջնոյ Արարատեան ըստ դրոյն և Արեւելեան Հանդէսին մէջ։ Յիշեալ վիճաբանութիւնը երբեմն գաղտնի, երբեմն ալ ճակատաբաց և բուռն կերպով յառաջ կերթայ։ Թէև երբեմն ես ալ գրիչը ձեռքս առի յիշեալ խնդրոյն վրայօք ունեցած դաղափարս յայտնելու համար, բայց և այնպէս վախնալով որ չ'ըլլայ թէ ես ալ խեղկատակաց կարգը անցնիմ, և հետևաբար եղին մեծութեանը հաւասարելու համար Տրիլիանեանց և Մինոբեանց կարօտիմ, լռութիւն կը պահէի՝ մինչև ցայժմ՝ գործոյն վախճանին սպասելու համար. բայց որովհետև սոյն վիճաբանութեան վախճանը գալիք չունի, ալ կը պարտաւորիմ յայտմ մասին ունեցած դաղափարս հրապարակաւ յայտնելու։

Մի և նոյն ժամանակին արժան կը համարիմ սա որոշումն ալ յայտնել, որ երբէք դիտաւորութիւն չունիմ պատասխանելու այնպիսի յարձակմանց դէմ՝ որոնք վնասակար և դառն զգացումներով գրուած ըլլան. վասն զի ընթերցողք փոխանակ օգուտ քաղելու այնպիսի գրութիւններէն՝ մեծամեծ վնասներ կ'ընդունին։ Որքան ցաւալի է ներկայ ժամանակիս վիճաբանողաց յատկութիւնը. միթէ հնարաւոր չէ՞, որ այս տեսակ վիճաբանութիւնները փոխանակ հպարտութեամբ և ծաղրաբանութեամբ կատարուելու՝ խոհեմութեամբ, անաչառութեամբ, և հանդարտ ոգւով կատարուին. անանկ որ՝ ընթերցողք փոխանակ երբեմն անհաշտ թշնամիներ և ոխերիմ հակառակորդներ տեսնելու զմեզ՝ ազգային բարիքը փնտռողներ և անոր յառաջադիմութեանը ցանկացողներ տեսնեն. բայց աւաղ

որ այս է սրտերնուս այժմեան կացութիւնը, և ոչքան դառն է անոր վրայոք խօսիլը... բայց այս նիւթիս վրայ խօսիլը ուրիշ ժամանակի թողլով՝ գանք մեր բուն խնդրոյն վրայ։

Յիշեալ խնդրոյն վրայ ունեցած կարծիքս յայտնելու համար աւելի աղեկ կ'ըլլայ, եթէ զայն քանի մը հարցումներու բաժնենք։

1. Հայոց տիկինները հագուստի կողմանէ Եւրոպացի տիկնայց նմանելու յարմարութիւն ունի՞ն մի։

2. Հայազգի տիկինները իրենց հագուստը փոխելու պարտականութիւն ունի՞ն մի։

3. Եթէ մեր տիկինները Եւրոպացի տիկնայց հագուստը առնելու ըլլան, ինչ օգուտ յառաջ կուգայ անկից։

4. Եթէ ժամանակէն յառաջ մեր տիկիններուն լիակատար արտօնութիւն շնորհենք իրենց հագուստը եւրոպականացընելու, բնաւ չարիք մը յառաջ չի՞գար։

Այս չորս հարցմանց պատասխանելէս առաջ կ'իմացընեմ արդէն ընթերցողաց, որ ես ոչ Ծերունիին դէմ հակառակութիւն մը ունիմ, ոչ ալ միւս կողմին. այլ ինչպէս որ առաջ ըսի, միայն այս մասին վրայօք ունեցած գաղափարս գրիչի յայտնեմ, ձգելով որ ընթերցողք ընեն ասոնց ամենուն քննութիւնը։ Գերումն կը խնդրեմ նաև, թէ որ գրութեանս մէջ պակասութիւն մը տեսնելու ըլլան, ինչու որ եղիտասարդ ըլլալով՝ Ծերունիին չափ գաղափար չունիմ հասարակութեան կարծեացը վրայ։ Գանք հիմա վերոյիշեալ հարցմանց պատասխաններուն։

Նախ՝ ըսինք թէ, "Հայոց տիկինները հագուստի կողմանէ Եւրոպացի տիկնայց նմանելու յարմարութիւն ունի՞ն մի։" Ինձ այնպէս կը թուի, թէ իւրաքանչիւր ոք այս հարցմանս պատասխանը գիտէ. այսինքն յայտնի է որ, եթէ մէկը ելլէ ու անմիջապէս իր հագուստին ձևը փոխելու ըլլայ, շատ դժուարութիւններ կը քաշէ կինքը անոնցմով վայելուչ ցրցունելու մասին։ և որովհետև Հայ տիկնայց մէջէն 100ին 90ը դեռ

հին հանդերձներու մէջ կը տապալին, ուրեմն յարմարութիւն չունին առ այժմ զանոնք նոր ձևի մը փոխելու. եթէ փոխելու ալ ըլլան՝ ինչպէս որ յայտնի է, փոխանակ անոնցմով պարկեշտուհիներ երևնալու՝ անպարկեշտուհեաց պիտի նմանին ծաղր ու ծանակ ըլլալու օտարազգեաց. հետևաբար՝ անհնարին նախատինք մը մեր Ազգին: Ապա ուրեմն մեր տիկիններէն շատերը կրնան իրենց ներկայ վայելուչ ձևը պահել, միանգամայն աղատ ձգելով ուրիշներն ալ՝ որոնք յարմարութիւն ունին եւրոպական հագուստներով վայելուչ երևնալու: Մէկ կողմանէ ալ թող ամեն ընտանեաց տէրերը ջանք ընեն իրենց ձեռացը տակ եղող օրիորդները եւրոպական հանդերձից վարժելու իրենց մատաղ հասակին մէջ, միայն թէ զգոյշ ըլլան, որ չըլլայ թէ իրենց զաւկունքը պճնասիրական զգացմամբք լեցուին և գոյնզգոյն զարդերով հպարտանան: Յիրաւի Ֆրանսիին ըսածին պէս, շատ օգտակար է եթէ Ֆէրոճէն ու Ֆոխ-լէնոթը վերնայ· բայց շատ վնասակար է նաև, եթէ անով զարդամոլութեան կործանիչ ախտը տիկնայց մէջ ճարակելու ըլլայ. և ինչպէս որ յայտնի է, պճնասիրութիւնը աւելի Եւրոպական հագուստներու կը մտնենայ քան թէ Տաճկական: Ապա ուրեմն ինձ այնպէս կը թուի, որ մեր գլխաւոր պարտականութիւնն է, նախ համեստութեան իղձը արծարծել Հայազգի օրիորդաց սրտին մէջ, և յետոյ փափաքիլ տեսնելու զանոնք արանց ժողովքներու մէջ. եթէ այսպէս ըլլայ բանը, այն ժամանակը օրիորդները շատ օգուտներ կը քաղեն 'ի մասին կրթութեան Ֆրոբենիին ըսածին համեմատ. բայց զարհուրելի պիտի ըլլայ հետևութիւնը, եթէ մեր ժողովներուն մէջ պճնասէր և զարդամոլ տիկնայց հանդիպելու դժբաղդութիւնը ունենանք: Բայց որովհետև դաստիարակութեան պակասութեամբը քիչ կը գտնուին Հայ ընտանեաց մէջ պճնասիրութենէ աղատ տիկիններ կամ օրիորդներ, ուստի որո՞նք պիտի ըլլան ճշմարիտ համեստութեան դասատուները: Արդ՝ միթէ աւելի օգտակար չի՞պիտի ըլլայ որ ամեն բանէ ա-

ուաջ Հայաղգի օրիորդաց համար մասնաւոր և կարդաւորեալ ուսումնարաններ ունենանք, ուր դասատուհիք իրենց բարոյական դասերուն հետ մէկտեղ ճշմարիտ համեստութեան իղձն ալ արծարծեն իրենց աշակերտուհեաց սրտերուն մէջ. անանկ որ՝ եթէ անոնք օր մը մեր ժողովներուն մէջ մտնելու ըլլան, փոխանակ վնասակար ըլլալու օգտակար ըլլան. այն ժամանակը պէտնասէր երիտասարդներն ալ ամօթով պիտի մնան. քանի որ հիմա, սոսկալի է ըսելը, լոկ պէտնասիրութեան գերիներ եղած են. (խօսքս ամենուն համար չէ)։ Սոնցմէ 'ի զատ՝ աւելի աղէկ չէ՞ր ըլլար, եթէ հին սովորութեան հետևող տիկնայց միտքը նորաձևութեան դաղափարը չի ձգէինք, և թողուինք զերեւնք մնացեալ տարիներին խաղաղութեամբ անցընելու։ Ներուններին ըսածին նայելով՝ մեք արականքս աւելի մտերմութիւն պիտի ցուցընենք ամեն այն տիկիններուն՝ որոնք Դէրաէն ու Թէ-ղէնոր ձգելով, կ'եւրոպականանան ըստ պատշաճի. արդեօք մեր ասանկ մէկ ընթացքը քի՞չ պիտի խոցէ այնպիսիներուն սրտերը՝ որոնք կամ աղքատութեան պատճառաւ կամ անվայելուչ երևնալու վախէն չի պիտի համարձակին իրենց հագուստին ձևը փոխելու. ապա ուրեմն՝ մեր կողմանէ լռութիւն պահե՛նք յայտմ մասին և զմեզ չափազանց փափաքողներ չի ցուցընե՛նք, այլ՝ ձգե՛նք հիները ուր որ են, միջակները իրենց կամացը, և օրիորդները կամ մանկամարդներն ալ համեստութեան մէջ կրթելու աշխատի՛նք, ասանկով բոլոր Ներուններին պէս փափաքողները օր մը իրենց ուզածին կը հասնին։

Երկրորդ խնդիրնիս ալ սա էր թէ, "Հայաղգի տիկինները իրենց հագուստը փոխելու պարտականութիւն ունի՞ն մի։' Յայտմ մասին իմ դաղափարս սա է թէ, առ այժմ ամեն տիկիններու հարկ չիկայ այս փոփոխութիւնը ընելու. այլ միայն անոնց՝ որոնք համեստ երևնալ գիտեն. ինչու որ շատ օգտակար է մեր այսպիսի տիկնայց եթէ ժողովներու մէջ գտնուին (չէ թէ ամեն ժողովներու մէջ), որով կարող ըլլան աւելի յա-

ռաջ երթալու կրթութեան մէջ և հետևաբար դասատուհիներ ըլլալու ուրիշներուն. ուստի թող աղատ ըլլան այնպիսիները Եւրոպական վայելչութիւնը իրենց վրայ առնելու և մեր ժողովներուն մէջ երևնալու, ահա լոկ այս պատճառը ունին անոնք. որով պարտաւոր են հագուստնին փոփոխելու: Բայց թէ որ ընթերցողները իմ ներքին զգացումն կ'ուզեն գիտնալ յայտմասին, ես բոլորովին անտարբեր մէկն եմ. համեստուհիները կրնան թէ Եւրոպական և թէ Տաճկական հագուստներով գտնուիլ մեր ժողովներուն մէջ, և յիրաւի ամենևին զօրաւոր պատճառ մը չեմ տեսներ ասոր համար. միթէ Տաճկական հագուստները համեստութիւն և վայելչութիւն չունի՞ն մի: Ինձ այնպէս կը թուի թէ, այն որ համեստ է վայելուչ ալ է. թող ըլլայ որ Ֆէսոպան կամ Լէնէաբի ըլլայ: Բայց թէ որ ներկայ քաղաքականութիւնը Ֆէսոպաններէ կախումն ունի այս մասին, ապա ուրեմն թող Ֆէսոպան հագնի՛ն համեստուհիք. բայց ճշմարիտը խօսելով՝ եթէ իմ կարողութեանս տակ ըլլար՝ Տաճկական հնաձևութեան մէջ կ'արգիլէի տնպարկեշտուհիները. որով աղատ կ'ըլլայինք այն ամեն չարիքներէն՝ որ անոնցմէ յառաջ կուգան:

Երրորդ խնդիրնիս ալ սա էր թէ, "Եթէ մեր տիկինները Եւրոպացի տիկնայց հագուստը առնելու ըլլան, ի՞նչ օգուտ յառաջ կուգայ անկից:" Յիրաւի շատ օգուտներ յառաջ կուգան, եթէ միայն համեստուհիք այս նորա ձևութեանը աղատ ըլլան. ինչու որ 1. Աւելի վայելչութիւն ունի Եւրոպական Ֆէսոպանը: 2. Եթէ ուզուի ածան գնով ալ կ'ըլլայ: 3. Եւրոպական հագուստ հագնող տիկին մը կրնայ իւր ամուսնոյն բազկովը պաշտպանուիլ ծուռումուռ փողոցներուն մէջ: 4. Եւրոպական հագուստ հագնող տիկին մը ժողովներու մէջ աղատ շարժում և վայելչութիւն կրնայ պահել. և այլն, և այլն: Բարոյական օգուտ մը ունենալը. զայն չեմ գիտեր:

Չորրորդ կամ վերջին հարցումնիս ալ սա էր թէ, "Եթէ ժամանակէն յառաջ մեր տիկիններուն լիակատար արտօնու-

թիւն շնորհենք իրենց հագուստը Եւրոպականացընելու, բնաւ չարիք մը յառաջ չի՞գար։" Այս վերջին խնդրոյս վրայ երկար բարակ կը խօսէի, եթէ արդոյ ընթերցողներս արդէն չի գիտնային որ այսպիսի արտօնութիւն մը ժամանակէն յառաջ շնորհելը մեծամեծ չարեաց պատճառ պիտի ըլլար. և ասիկայ արդէն յայտնի է. ինչու որ եթէ ամեն տիկիններ աղատ ըլլան, Դիէրոէն, Թէ-լէնոը և Ղնէոբէն՝ Դիւոպոնի և Դաբէելի փոխելու, շուտով պիտի ուզեն ձեռք անցընել այն ազատութիւնը՝ զոր Եւրոպացւոց տիկինները ունին. և ո՞վ չի սոսկար երբ անգամ մը խորհելու ըլլայ, թէ անխոհեմ, անուսումն և անհամեստ իգականաց այսպիսի մէկ ազատութեամբը ինչ չարիքներ յառաջ չեն գար։ Ուրեմն՝ ինչպէս որ առաջ ալ ըսի, նախ՝ համեստութեան, բարի կրթութեան և ապա արտաքին վայելչութեան փափաքելու ենք Հայազգի տիկնայց համար. կը յուսամ որ մեր բարեսիրտ տիկիններն ալ մեր ըսածին համոզուելով պիտի ջնեն ղիրենք և անկէց վերջը Եւրոպական նորաձևութեան հետևին։ Շատ օգտակար է թէ մեղի և թէ՛ իգականաց, եթէ ինքզինքնին ճանչցող, խոհեմ, համեստ և վայելչութիւն պահելու կարող տիկիններնիս Եւրոպացւոց նմանին հանդերձի կողմանէ. իսկ ընդհակառակն շատ վտանգաւոր է, եթէ ընդհանուր աղատութեամբ բոլոր Հայ տիկինները Դիէրոէնին ու Թէ-լէնոնին նետեն և եւրոպականանան։

Այս է իմ գաղափարս, զոր ներկայ յօդուածիս մէջ համառօտիւ յայտնեցի. յուսալով որ ուրիշ ատեն այս խնդրոյս վրայ աւելի ընդարձակ խորհրդածութիւն մը ընելու պատեհութիւնն ունենամ։

ԵՐԳ ԱՌԱՒՕՏԵԱՆ

ՓՈՔՐԻԿ ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

Վանի՛ սիրտը շընորհակալ
Պարսի ըլլալ Մարչէն,
Որ ցնս ազատ այս գիշեր ալ
Պահեց բոլոր վնտանգէն։

Ստուած բարի տըղայքները
Միշտ անդադար կը սիրէ.
Եւ իւր անբաւ օրհնութիւնը
Անոնց վերայ կը խրկէ։

Բարի տըղայն պարտի սիրել
Իրեն քաղցրիկ ծընողքը,
Եւ շարունակ 'ի գործ դընել
Անոնց իրեն ըսածը։

Բարի տըղայն պարտի սիրել
Դորովալից իւր Աղգը.
Անոր համար միշտ նուիրել
Ի՛նչ որ ունի իւր ձեռքը։

Բարի տըղայն պարտի սիրել
Իր եղբայրը ու քոյրը.
Բարիք յաւէտ անոնց ընել
Պիտի ըլլայ իւր իղձը։

Բարի տըղայն պարտի սիրել
Բոլոր իր ընկերները.
Միշտ շարունակ զանոնք յարգել
Պիտի ըլլայ իր պարտքը։

Բարի տըղայն լուռ կը կենայ,
Ի զուր տեղը չի պօռար.
Իրեն գրթոտ ծընողացը
Կեղութիւն բընաւ չի տար։

Բարի տըղայն միշտ կը խորհի
Սիրել զԱստուած, և յարգել
Իր ծընողքը և ընկերը,
Անոնց բարիք միշտ ընել։

ԵՐԳ ՕՐՕՐՈՑԻ

Հանգիր, մանուկ, մի արտասուեր, գա՛ռնուկ իմ,
Գորովագութ մայրըդ քեզ միշտ կը հսկէ.
Արտասուելըդ անօգուտ է, ո՛րդեակ իմ.
Օ՛յս մի՛ նեղեր, աչուըներըդ ալ գոցէ։

Մայրըդ գիտցեր, ըզքեզ պիտի շատ սիրէ,
Երբ այն ըզքեզ միշտ հընազանդ կը տեսնէ.
Մանուկն պարտի սիրել իրեն մայրիկը,
Եթէ կ'ուզէ, որ այն սիրէ միշտ զինքը։

Տիեզերաց սուրբ Արարչին կամքն այս է,
Որ մանուկ մը մօրը հըլու միշտ ըլլայ.
Այո՛, այսպէս զաւակի մը վերայ է՝
Որ օրհնութեան ցօղըն Երկնից կը տեղայ։

Սիրտըս փափուկ կ'ուզէ, որ դու շուտ մեծնաս,
Եւ քու Աստդիդ բարիք ընել կարենաս,
Սիրես զԱստուած, որ զքեզ անդուլ կը հսկէ,
Սիրես ծընողդ, որ քեզ բարի կը մաղթէ։

Սիրես նաև քուկին Աղբրդ սիրելի,
Որմէ այս քու կեանքըդ Ի լոյս եկած է.
Չի Աղդասէրն Աստուծմէ միշտ կը սիրուի,
Որ ամենուս բարի ուղղ Լոյակ մ'է։

Արդ՝ ալ գոցէ աչուքներդդ և ննջէ.
Այդ ընդունայն մտմտալէդ դադարէ.
Գոցեմ երեսդ, որ դու հանդիստ քընանաս,
Արտասուելու պատճառ բընաւ չունենաս։

Այս անգամ սոյն երգը հրատարակելուս պատճառը, կ'արծեմ թէ, պիտի հասկընան ամեն ճշմարիտ աղդասէր, ճշմարիտ աստուածասէր ու ճշմարիտ որդեսէր մայրերը. գիտնալով որ մարդս իւր բնական յատկութիւնը օրօրոցին մէջ կը սորուի։ Հոն մանուկը կը հաւաքէ իւր անարատ ուղեղին մէջ այն յատկութիւնները՝ որոնք կընան իրեն մատակարարուիլ իւր գորովալից մօրմէն։ Արդ՝ մայրերը խիստ զգոյշ ըլլալուն որ չըլլայ թէ իրենց անմեղ մանկանը ականջներուն հասցընեն այնպիսի խօսքեր՝ որոնց մէջ փոխանակ Աստուածսիրութեան, Աղդասիրութեան, Ծնողասիրութեան և Ընկերսիրութեան վրայօք խօսքեր գտնուելու՝ նախանձութեան, փառասիրութեան, անձնասիրութեան և զարդասիրութեան գաղափարներ պարունակող խօսքեր կը դտնուին։ Վայ այն զաւակին՝ որ իր օրօրոցին մէջ կը սորուի, թէ մարդս դեղեցիկ, հարուստ և զարդասէր ըլլալու է. և բիւր վայ այն մարդուն՝ որ իրեն զաւակացը ասանկ կործանիչ և Երկնից տհաճելի դասեր տուող ամուսին մը ունի։

ԵՐԳ ՅԱՐՔԱԿԱՐԱՆ

ԸՆԴԴԻՄ

ՈԽԵՐԻՄ ԹՇՆԱՄԻՈՑՆ ՄԵՐ ԱՒԵՐԻՉ ԱՆՀԱՅՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԿՈՐԾԱՆԻՉ ՏԳԻՏՈՒԹԵԱՆ

Երբէք, ո՞ր դիք քաջին Հայկայ անկործան,
Ի՞նչ դեռ ունիք, Հայաստանի զաւակներ.
Հասաւ մեզ լուր շքեղ Արփւոյն գալստեան.
Ո՜հ, ի՞նչպայծառ... Երշալոյսը չէ՞ք տեսներ:

Երբ՝ ի զէնս, արիասիրտ ո՜ Հայեր.
Էրեւ+ միմեանց աչք գոչեցէք անդադար:
Թշնամիք մեզ անշուշտ ընկճել են եկեր...
Ո՞ր Հայն արդեօք այս թշնամեաց դէմ չ'ելլար:

Երբ՝ ի զէնս, արիաբար մարտնչե՛նք,
Արդար Արկինքն է մեր պաշտպան, չիսոսկանք.
Տըգիտութեան մինչև յաղթենք, յարձակինք.
Որ գիտութեան վեհ յասպարէզ ընթանանք:

Ուր ևս դիւրաւ կրնանք յաղթել յաւիտեան
Օրոգին անհաշտ թշնամւոյն մեր աւերիչ...
Երբ յառաջ, փողք հնչեսցին յարձակման...
Թշնամեաց մեր թումբերն տեսնենք բնաջինջ:

Օ՜ն, օ՜ն, յառաջ, մի՛ բընաւին երկբայիք.
Պիտի կանգնենք շուտ յաղթութեան դրօշակ.
Ոմբակոծենք զօրս թշնամեաց, արհաւիրք
Հերենք պատէ, մինչև փախչին շարունակ։

Մի՛ վըհատիք, արի՛ք, մանկունք Թորգոմայ,
Ընհաշտութիւնն մեր սահմանէն աքսորենք.
Իր նրշոյլը անգամ մեր մէջ չիմընայ.
Այն յաւիտեան և շարունակ հալածենք։

Արի՛ք յառաջ, ո՜ ազգասէր հոգիներ.
Յարձակելու կարգը մեզի է եկած...
"Էջ+" գոռայ Վեհրն Երկինք 'ի բարձանց.
"Էջ+" գոչէ ևս Հայաստան. չէ՞ք լսեր։

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

Պատիւ ունիմք ծանուցանելու յարգոյ Հասարակութեան գլխաւորապէս մեր Աղգասէր բաժանորդաց, որ Մոսկոյէ Մասկոյ առաջին տարւոյն մնացեալ երեք տետրակները կը յուսանք որ շուտով պիտի հրատարակուին. մի և նոյն ժամանակին կ'իմացընենք նաև որ ամսագրիս շարունակութիւնը գալ տարի ալ պիտի ըլլայ, բայց հետևեալ պայմանով. այսինքն՝ 1859 տարւոյն համար Մոսկոյէ Մասկոյ բաժանորդ ըլլալու փափաքող անձինք հիմակուընէ ստորագրութիւն մը տալուն յառաջիկայ Դեկտեմբեր ամսոյն 15երորդ օրը իրենց բաժանորդութեան գինը վճարելու համար, եթէ բաժանորդաց թիւը 120ի հասնելու ըլլայ: Եթէ այս կերպով մինչև այն ժամանակները 120 հատ կանխիկ վճարող բաժանորդներ ունենալու ըլլանք՝ անմիջապէս տարեկան ծախքին համար հարկաւոր եղած այս հաւաքեալ գումարը պիտի յանձնուի տպագրապետին. որն որ իւր ստորագրութեամբը պիտի ծանուցանէ յարգոյ բաժանորդաց, թէ մեր ամսագրին տարեկան ծախքը ընդունած ըլլալովը յառաջիկայ տարւոյն մէջ անընդհատ շարունակութիւնը վաւերացեալ է: Ասիկայ այսպէս ըլլալով՝ վերջէն ստորագրուող բաժանորդները ամենևին գանգատելու տեղի չիպիտի ունենան, և ոչ ալ պատճառ պիտի ունենան զմեզ նեղելու, և իրենց ինկած պարտաւորութիւնը չիկատա-

ռելով ստիպելու զմեզ, որ Աղդասէր անձանց ձեռնտուութիւնը դիմենք, որուն՝ ճշմարիտը խօսելով, իրաւունք չունինք... Բայց Աղէքսէր Ռէյն ուրանց է՞ր ընելէ+ նպասպէն պարպէյներէն ը-նկարելու՝ մեր Աղէյն պարդ՞ը հոկելու՝ կ՚աշխատի։

Ներկայ տարուոյս դեռ իրենց պարտաւորութիւնը չիկատարող բաժանորդներէն կը խնդրենք, որ յօժարին խորհելու թէ այս պարագայիս մէջ հեղինակէ մը իր խոստման լրումը խնդրելը իրաւունք չէ. թող յիշեն, եթէ կ՚ուզեն, որ պայմաններնուս առաջինը բաժանորդաց կանխիկ վճարումն է։

Մոսայ+ Մոսէսը ասկէց վերջը ապառիկ վճարող բաժանորդներ չիպիտի ունենայ. որպէս զի կարող ըլլանք օրինաւոր բաժանորդաց ցուցակ մը ունենալու, և պէտք եղած ատենը հրատարակելու զայն։